


ՊՐՈՖ. Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ



ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՎՈՐԵՐԸ

11 MAR 201

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՅԱՆԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՐՈՖ. Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

371

Ս-19 *mk*

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940

27 FEB 2014

46. 024

1485
40

ԸՆԿԵՐ ՍՏԱԽՆԸ ՅԵՎ ԿՈՍՏՈՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ընկեր Ստալինը, Մարքսի, Ենգելսի, Լենինի ուսմունքի շարունակողն ու դարգացնողն է բոլոր բնագավառներում, դրանց թվում կուլտուրական հեղափոխության, մասսաների ու մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության, կոմունիստական հասարակություն կառուցողների գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների հաղթահարման խնդրում: «Ընկեր Ստալինի նախաձեռնության ու ամենակտիվ մասնակցության հետ է կապված այն բոլոր քիչ թե շատ ելակները, վոր այդ տարիների ընթացքում կուսակցությունը և կառավարությունը կառուցել և կառուցում են ԽՍՀՄ-ում, սոցիալիզմի առաջին յերկրում» (Մոտոսով—«Ստալինը վորպես Լենինի գործի շարունակողը», «Պրավդա», 21 դեկտեմբերի 1939 թ.): Մեր աշխատավորական մասսաների կուլտուրական աննախընթաց վերելքը, մեզ մոտ կատարված իսկական կուլտուրական հեղափոխությունը, մեր մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության գործը, մեր յերկրում ընդհանուր պարտադիր կրթության իրականացումը, խորհրդային դպրոցի բոլշևիկյան վերակառուցումը, մեր մանկավարժական պրակտիկայի ու թեորիայի բնագավառում յեղած ամեն կարգի բուրժուական հակահեղափոխական, հակալենինյան աղավաղումների մերկացումն ու ջախջախումը, խորհրդային մանկավարժական գիտության իրապես մարքս-լենինյան հիմունքներով վերակառուցումը, մանկավարժության ու մանկավարժների իրավունքների վերականգնումը,—այս բոլորն անխղիճ կերպով կապված են ընկեր Ստալինի անվան հետ:

I. ԴԱՏՏԻՍԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դաստիարակության եյությունը, դերն ու նշանակությունը հասարակական կյանքում բոլորում են մարքս-լենինյան ուսմունքից, մարքս-լենինյան կուսակցության աշխարհայացքը հանդիսացող դիալեկտիկական մատերիալիզմից, պատմական մատերիալիզմից:

Մեզ հետաքրքրող՝ դաստիարակության խնդրի ճիշտ լուսաբանման համար հատկապես կարևոր ու անմիջական նշանակություն ունի մարքս-լենինյան ուսմունքը հասարակական կեցության ու հասարակական գիտակցության, առհասարակ հասարակական կյանքի բաղիսի ու վերնաշենքի հարաբերության ու փոխազդեցության մասին:

Այդ կապակցությամբ՝ դաստիարակության եյության ու նշանակության լուսաբանման խնդրում պետք է պայքարել յերկու կարգի սխալ, հակամարքսիստական բմբռնումների դեմ. ա) դաստիարակության (ինչպես առհասարակ մարդկանց գիտակցության, գաղափարների, կարծիքների) նշանակության իդեալիստական գերազնահատման դեմ, բ) դաստիարակության, մարդկանց հասարակական գիտակցության, հասարակական գաղափարների անտեսման ու թերագնահատման դեմ, վորի հիմքն է հանդիսանում գոհհիլ, տնտեսական մատերիալիզմը, արտադրողական ուժերի ըմբռնման ուղորդող իստական, մենդիվիկյան ազավաղումը, կապիտալիզմի ավտոմատիկ, ինքնահոսով կործանման ու սոցիալիզմի առաջացման՝ ինքնահոսի ու տարերայնության ուսմունքը:

Հայտնի չե, վոր մինչամարքսյան մատերիալիստները, դրանց թվում առաջին հերթին ֆրանսիական մատերիալիստները, մատերիալիստներ լինելով «ներքևում», այսինքն՝ բնական յերեւելույթների բացառման խնդրում, իդեալիստ եյին «վերևում»՝ հասարակական յերևույթների լուսաբանման հարցում: Նույն իդեալիզմը մենք տեսնում ենք և 19-րդ դարի սոցիալիստ ուստպիստների, ռուսական նարոդնիկների մոտ:

Ըստ ֆրանսիական մատերիալիստ լուսավորիչների ու 19-րդ դարի սկզբի սոցիալիստ ուստպիստների՝ աշխարհը կառավարվում է կարծիքով, հասարակական կյանքի շարժիչ ուժը մարդկանց

գիտակցությունն ու գաղափարներն են: Մինչև այժմ մարդկային հասարակության մեջ գոյություն ունեցող բոլոր հարիքներին, անարդարությունների պատճառը յեղել են մարդկանց սխալ կարծիքները, մոլորություններն ու նախապաշարունակները: Մոռում է միայն մարդկանց միտքը լուսավորել, մոլորության ու նախապաշարունակների փոխարեն նրանց գինել «հավիտենական ու ճշմարիտ բանականության» ղենքով, և «դրանից հետո նախապաշարունակները և անարդարությունը, արտոնություններն ու ճնշումն իրենց տեղը կգիջեն հավիտենական ճշմարտության, հավիտենական արդարության, մարդու միակ հավասարության և անկապտելի իրավունքներին» (Энгельс—«Развитие социализма от утопии к науке». 1931 г., էջ 36):

Ընկեր Ստալինը «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին» իր աշխատության մեջ նշում է, վոր ուստպիստների, դրանց թվում և նարոդնիկների, անարխիստների, եսերների անկումը բացատրվում է, ի միջի այլոց, նրանով, վոր նրանք չընդունելով հասարակության նյութական կյանքի պայմանների առաջավոր դերը հասարակության զարգացման մեջ և ընկնելով իդեալիզմի գիրկը՝ իրենց պրակտիկ գործունեյությունը կառուցում եյին վոչ թե հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջների հիմքի վրա, այլ հասարակության ռեալ կյանքից կտրված «իդեալական պլանների» և համայնապարփակ նախազծերի հիմքի վրա:

Սրան հակառակ, «մարքսիզմի-լենինիզմի ուժն ու կոնսականությունն այն է, վոր իր պրակտիկ գործունեյության մեջ նա հենվում է հատկապես հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջների վրա, հասարակության ռեալ կյանքից յերբեք չկտրվելով» (Ստալին—«Դիալեկտ. և պատմ. մատերիալիզմի մասին». «Համ Կ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց», էջ 161):

Ընկեր Ստալինը զարգացնելով մարքս-լենինյան փիլիսոփայական մատերիալիզմից բոլոր մարքսյան այն զրույթը, վոր «վոչ թե մարդկանց գիտակցությունն է վորոշում նրանց կեցությունը, այլ, ընդհակառակը, նրանց հասարակական կեցությունն է վորոշում նրանց գիտակցությունը»—գեռ իր՝ 1906 թ. գրած «Անարխիզմ թե սոցիալիզմ» հոդվածում ասում է. «Նույնը պետք է ասել և հասարակական կյանքի մասին: Այստեղ ել

նյութական զարգացումը նախորդում է իդեական զարգացման...» (Берия—«К вопросу об истории большевистских организаций в Закавказье», Партиздат ЦК ВКП(б), 1937, էջ 80):

Մարքս-լենինյան փրկիստիայական մատերիալիզմից հետևվում է, վոր «հասարակութան նյութական կյանքը, նրա կեցությունը նախնական առաջնային է, իսկ նրա հոգևոր կյանքը—յերկրորդային, ածանցական...»:

Նշանակում է, հասարակութան հոգևոր կյանքի ձևավորման աղբյուրը, հասարակական իդեաների, հասարակական թեորիաների, քաղաքական հայացքների, քաղաքական հիմնարկների ծագման աղբյուրը պետք է փնտռել վոչ թե բուն իսկ իդեաների, թեորիաների, հայացքների, քաղաքական հիմնարկների մեջ, այլ հասարակութան նյութական կյանքի պայմանների մեջ, հասարակական կեցության մեջ, վորի արտացոլումն են այդ իդեաները, թեորիաները, հայացքները և այլն» (Ստալին—«Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին», «Համկ(բ)Կ պատմություն», էջ 160):

Ստալինյան սույն դրույթները փայլուն զինք են դաստիարակութան եյուլթյան, բովանդակութան ու նպատակների, դպրոցի, ուսուցման ու կրթության, մանկավարժական դաղափարների ու տեսությունների ամեն կարգի իդեալիստական, մետաֆիզիկական մեկնաբանումների դեմ: Ընկեր Ստալինը սրանով մերկացնում է բացարձակ, մշտնջենական դաստիարակչական իդեալների կեղծիքն ու սնամեջությունը, մեր ձեռքն է տալիս անփոխարինելի մեթոդաբանական զենք՝ ճիշտ կերպով հասկանալու դպրոցի, դաստիարակության, կրթության, մանկավարժական գաղափարների փոփոխման ու զարգացման իրական պատկերն ու պատճառները, դրանց բոլորի դասակարգայնությունն ու կուսակցականությունը:

Մարքս-լենինյան ուսմունքը սխալ, հակադիտական է համարում ու ջախջախում վոչ միայն հասարակական գաղափարներ, թեորիաներ, քաղաքական հայացքների ու հիմնարկների առաջացման իդեալիստական մեկնաբանումը, դրանց նշանակության իդեալիստական գերազնահատումը, այլ նաև դրանց նշանակության անտեսումն ու թերազնահատումը հասարակական կյանքում:

Մարքսիզմից-լենինիզմից ամենևին չի հետևում, թե հասարակական իդեաները, թեորիաները, քաղաքական հիմնարկները

հասարակության կյանքում նշանակությունն չունեն, թե նրանք հակադարձ ներդրումությունն չեն ունենում հասարակական կեցության վրա: «Ինչ վերաբերում է հասարակական իդեաների, թեորիաների, հայացքների, քաղաքական հիմնարկների ուղանկալքյալը, ինչ վերաբերում է նրանց դերին պատմության մեջ, ապա պատմական մատերիալիզմը վոչ միայն չի բացատում, այլ, ընդհակառակը, ընդգծում է նրանց լուրջ դերն ու նշանակությունը հասարակության կյանքում, հասարակության պատմության մեջ» (Ստալին—«Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին», «Լենինիզմի հարցեր», 11-րդ հր., էջ 546):

Այս դրույթները հիմք են հանդիսանում լենինյան-ստալինյան ուսմունքի՝ հեղափոխական գիտակցության, հեղափոխական թեորիաների նշանակության մասին և ուղղված են մենշևիկյան ինքնահոսի, տարերայնության դեմ, հեղափոխական գիտակցության, թեորիայի, բանվոր դասակարգի հեղափոխական դաստիարակության, կադմակերպվածության թերազնահատման ու անտեսման ուղորտունիստական հայացքների դեմ:

«Եկոնոմիստների» և մենշևիկների անկման պատճառներից մեկն էլ այն է, վոր նրանք չեյին ընդունում առաջավոր թեորիայի, առաջավոր իդեալի մոբիլիզացիայի յենթարկող, կադմակերպող ու փոխակերպող դերը:

Հանրաժանութ է այն հակայարևան, տեսական ու աննկուն պայքարը, վոր սկզբից ևեթ ընկեր Լենինն ու ընկեր Ստալինը տարել են և ընկեր Ստալինը տանում է ինքնահոսի, տարերայնություն թեորիայի մենշևիկյան թերազնահատման, անտեսման դեմ:

Դեռ 1905 թ. ընկեր Ստալինը գրում է. «Տարերային բանվորական շարժումը, շարժումն առանց սոցիալիզմի անխուսափելի կերպով մանրանում է և ընդունում տրեղյունիոնիստական գունավորում, յենթարկվում է բուրժուական դաղափարախոսության... Բանվորական շարժումը պետք է միացվի սոցիալիզմի հետ, պրակտիկ գործունեյությունը պետք է սերտորեն կապվի թեորիայի հետ և դրանով տարերային բանվորական շարժմանը տա սոցիալ-դեմոկրատական իմաստ և տեսք» (Сталин—«Вскольз о партийных разногласиях», Берия—«К вопросу об истории большевистских организаций в Закавказье», стр. 22):

Այնուհետև ընկեր Ստալինը բազմիցս անդրադառնում է այդ խնդրին, մերկացնելով ու ծաղրելով 2-րդ ինտերնացիոնալի կուսակցություններին, վորոնք բոլորովին աղճատելով մարքսիստական պատմական մատերիալիզմի դրույթները արտադրողական ուժերի և նրանց զարգացման նշանակության մասին՝ փաստորեն կանգնում են կապիտալիստական կարգերի պահպանման ու գոյեցման, դրանց դեմ վորեն կերպ պայքարելուց, բանվոր դասակարգին այդ պայքարի համար կազմակերպելուց ու գաստիարակելուց հրաժարվելու դիրքերի վրա:

Նրանք չեն կարող և չեն ուզում հասկանալ, վոր մարքսիզմի-լենինիզմի կլասիկները գիտականորեն հիմնավորելով կապիտալիստական հասարակության կործանման անխուսափելիությունը և նոր, սոցիալիստական հասարակության ստեղծման անհրաժեշտությունը, այդ անխուսափելիությունը և անհրաժեշտությունը տակ հասկանում են և ամենամեծ արտադրողական ուժի՝ հեղափոխական դասակարգի, կապիտալիզմի գերեզմանափոր պրոլետարիատի առկայությունը և, վոր գլխավորն է, այդ պրոլետարիատի կազմակերպումն ու հեղափոխական գաստիարակումը և նախապատրաստումը՝ կապիտալիստական կարգերը պրոլետարական հեղափոխության միջոցով վոչնչացնելու և նոր անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար:

Ընկեր Լենինը դեռ 1894 թ. իր «Ինչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք պայքարում սցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ Մարքսի հեղափոխական ուսմունքը նման ձևով աղճատողների մասին գրում է. «Միայն լույսի տակ ներկայացնելով պատմական փաստերը, մոռանալով այն հսկայական աշխատանքի մասին, վոր սոցիալիստները ներդրել են բանվորական շարժմանը գիտակցվածություն ու կազմակերպվածություն հաղորդելու համար, մեր փրկսոփանքը, բացի այդ, Մարքսին են փաթաթում ամենաանմիտ ֆատալիստական հայացքներ» (Լենին, 1-ին հատոր, էջ 212):

Իր «Լենինիզմի հիմունքների մասին» աշխատության մեջ ընկեր Ստալինը նշում է, վոր տարերայնության թեորիան՝ շարժման մեջ գիտակցական տարրի դերը նվազեցնելու թեորիան է, «պոչականության» գաղափարախոսությունը:

Այդ թեորիայի արտահայտությունը 2-րդ ինտերնացիոնալի կողմից դառնկացրած՝ այսպես կոչված «արտադրողական ուժերի» ֆատալիստական թեորիան է, վորն ըստ եյություն հանգում է կապիտալիստական կարգերի արգարացման և հավերժացման, բանվոր դասակարգին դատապարտելով պասսիվության ու այդ կարգերին հարմարվելուն:

Համ 4(բ) կ 17-րդ համագումարում իր հաշվետու զեկուցման մեջ ընկեր Ստալինը կրկին հիշեցնում է, վոր հեղափոխության հաղթանակը յերբեք ինքն իրեն չի լինում, այլ այն հարկավոր է նախապատրաստել և նվաճել:

Այս բոլորից բղխում է այն հսկայական աշխատանքը, վորը պրոլետարական հեղափոխական կուսակցությունը պետք է տանի բանվոր դասակարգի, աշխատավորական լայն մասսաների մեջ՝ նրանց հեղափոխական վոգով դաստիարակելու, նրանց մեջ հեղափոխական, սոցիալիստական գիտակցություն պատվաստելու համար: Այստեղից ել՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գործունեության մեջ զաստիարակչական-մանկավարժական բնույթի գործունեության խոշոր տեսակարար կշիռը: Լենինն իր «О смешении политики с педагогикой» հոդվածում գրում է. «Սոցիալ-դեմոկրատական կուսակցության քաղաքական գործունեության մեջ միշտ կա և կլինի մանկավարժության վորոշ տարր. պետք է դաստիարակել վարժու բանվորների ամբողջ դասակարգը...» (Լենին—Ցերկերի ժողովածու, 7-րդ հ., էջ 308):

Մի այլ տեղ խոսելով Մարքսի և Ենգելսի ծառայությունների մասին բանվոր դասակարգի հանդեպ, ընկեր Լենինն այդ ծառայությունների եյությունը համարում է այն, վոր նրանք բանվոր դասակարգին սովորեցրին ինքնիմացություն և ինքնագիտակցություն (Լենին—«Փր. Ենգելս», Ցերկեր, 1-ին հ., էջ 410):

«Լենինիզմի հարցերի շուրջը» իր աշխատության մեջ ընկեր Ստալինն ասում է. «Կուսակցությունը, յեթե նա կամենում է միայն պրոլետարիատի կուսակցություն, պետք է իմանա, վոր ինքն ամենից առաջ և գլխավորապես բանվոր դասակարգի դեկավարն է, առաջնորդը, ուսուցիչը» (Ստալին—«Լենինիզմի հարցերը», էջ 190):

Մասսաների մեջ հեղափոխական գիտակցություն պատվաստելը, նրանց նոր գաղափարների վոգով դաստիարակելն անհրա-

ժեշտ և դառնում հատկապես հեղափոխական, կրիտիկական ժամանակաշրջանում, յերբ արտադրողական ուժերի զարգացումն արգելակվում է հին արտադրական հարաբերությունների ու զրանց կողմ դասակարգերի կողմից, վորոնց վերացնել կարելի չէ միայն բռնի, հեղափոխական ճանապարհով, նոր դասակարգերի գլխավոր գործունեությունն ճանապարհով:

Այս բոլորի հետ միաժամանակ չալիտի մոռանալ, վոր մասնաների կոմունիստական դաստիարակությունը պատկազ հարմարեցման պրոցեսն է, այլ աշխատանքի, պայքարի, հեղափոխության պրոցեսում արտաքին պայմանների փոփոխման հիման վրա իր սեփական ընտելության փոփոխման, վերադաստիարակման պրոցես: Ընկեր Ստալինը «Լենինի գմի հիմունքների մասին» աշխատության մեջ խոսելով պրոլետարիատի գեղատառության մասին, նշում է, վոր այդ գեղատառության անհրաժեշտ է վոչ միայն սոցիալիզմի համար անհրաժեշտ տնտեսական ու կուլտուրական նախադրյալներ ստեղծելու, այլև թե իր՝ պրոլետարիատի, և թե մանր-բուրժուական խավերի վերափոխման, վերադաստիարակման համար: Ապա ընկեր Ստալինն անում է Մարքսից հետևելով մեջբերումը. «Դուք պետք է, — ասում էր Մարքսը բանվորներին, — ապրեք քաղաքացիական պատերազմի և միջադպրոցին ճակատամարտերի 15, 20, 50 տարիներ, վոչ միայն նրա համար, վոր փոխեք գոյություն ունեցող հարաբերությունները, այլ վորպեսզի ինքներդ ել փոխվեք և քաղաքական տիրապետության ընդունակ դառնաք» (տես Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի Ցեղերը, 8-րդ հ., էջ 506): (Ստալին — «Լենինի գմի հարցերը», էջ 17):

Սույն խոսքերի՝ աշխատանքի ու պայքարի ընթացքում մասնաների կոմունիստական վերադաստիարակման մասին ավելի հանգամանորեն կխոսվի V և VI գլուխներում:

II. ԴՊՐՈՑԻ, ՈՒՍՈՒՅՁԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Այս բոլորը բացառիկ մեթոդաբանական նշանակություն ունի մեր մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության, կրթության ու ուսուցման, խորհրդային դպրոցի ու խորհրդային

ուսուցչի խոշոր նշանակությունն ու դերը՝ հիմնավորելու ու ապացուցելու համար:

Այս բոլորը խոշոր նշանակություն ունի հատկապես «դպրոցի մահացման» հակալենինյան թեորիայի ու պրակտիկայի մերկացման ու ջախջախման գործում: Հայտնի չեն այն խոշոր վնասն ու ավերածությունը, վոր մի ժամանակ այդ թեորիան ու պրակտիկան հասցրել են մեր դպրոցին, այն տանելով դեպի քայքայում:

Կասկածից վեր է, վոր դպրոցի մահացման հակալենինյան թեորիայի (դպրոցի, կազմակերպված դաստիարակության, սիստեմատիկ գիտելիքների ժխտում և այլն) քաղաքական ակունքը մենշևիկիստ ինքնահոսի, տարերայնության ուսմունքն է: Ընկեր Ստալինի կողմից տարերայնության այդ թեորիայի ջախջախումը, հեղափոխական կազմակերպվածության, դաստիարակության անհրաժեշտության հիմնավորումը հիանալի քաղաքական-տեսական դեմք են հանդիսանում մերկացնելու ու ջախջախելու վերոհիշյալ հակալենինյան թեորիան:

Հայտնի չէ, վոր դպրոցի մահացման թեորիան ու պրակտիկան մեզ մոտ անմիջապես փոխանցվել է ամերիկյան բուրժուական մանկավարժությունից ու դպրոցից: Դպրոցի մահացման թեորիայի գաղափարական-մեթոդաբանական ակունքը ամերիկյան սեակցիոն իդեալիստական-պրագմատիստական փիլիսոփայությունն ու պրագմատիստական մանկավարժությունն են: Այդ փիլիսոփայության ու մանկավարժության տեղանավոր ներկայացուցիչ Ջոն Դյուլիի փիլիսոփայական, հոգեբանական ու մանկավարժական յերկերը մի ժամանակ յեռանդուն կերպով թարգմանվում, տարածվում և նրա հայացքները անքննադատ կերպով փոխադրվում էյին մեզ մոտ: Պատահական չէ, վոր «դպրոցի մահացման» թեորիայի տխրահռչակ հեղինակներից մեկը՝ Շուլցինը դեռ 1918 թ. իր հոդվածներում ամեն կերպ մեր ուսուցչիներին հանձնարարում էր. Դյուլիի աշխատությունները՝ վորպես մեր դպրոցի ու մանկավարժության համար ծայր աստիճան կարևոր ու արժեքավոր բան:

Պրագմատիստական փիլիսոփայության եյությունը — ուրյեկատիվ ճշմարտության ժխտումն է: Ըստ այդ փիլիսոփայության՝ գիտական թեորիայի արժեքը վոչ թե որյեկտիվ իրականության հիշատակումն է:

արտացոլումն է, այլ բացառապես այդ թեորիայի գործնական ոգոււր: Այս փրկսոփայութեան արտահայտութեաններէն մանկավարժութեան ու գաղտցի բնագավառում «պրոյեկտներէ մեթոդն» է, ըստ վորի գաղտցի խնդիրը վոչ թէ սխառմատիկ, խորացրած ու գիտական, ստույգ գիտելիքներ տալն է, այլ պրակտիկ նշանակութուն ունեցող, անմիջական ոգուտ տվող «պրոյեկտներն», գործերի կատարումն է, այսպէս առած՝ «գոլար շինելը»: Ահա նման «թեորիան» եր, վոր փոխադրվել եր մեզ մոտ և հրամայվում եր վորպէս հեղափոխական մանկավարժութեան վերջին խոսք:

«Դպրոցի մահացման» թեորիայի հեղինակները աչքակապութեամբ խեղաթյուրելով, կեղծելով Մարքսից, Լենինից բերած, կլիսում կտրած ցիտատներ, Ֆրադնիւր՝ չարաշահելով փորձ, պրակտիկա և այլ հասկացողութեանները, պրակտիկայի մարքս-լենինյան ընթերցումը (վորպէս մեր իմացութեան ճշտութեան չափանիշ) մաքսանենգաբար փոխարինում եյին պրակտիկայի իդեալիստական պրագմատիստական, նեղ գործածողական ըմբռնմամբ:

Ընկեր Ստալինի հանձարեղ մտքերը հեղափոխական թեորիայի ու պրակտիկայի մասին, ինչպէս և որչեղտիվ ճշմարտութեան մասին՝ անփոխարինելի մեթոդաբանական զենք են հանդիսանում բոլոր նման կարգի հակալենինյան «թեորիաների» ու աղավաղումների մերկացման ու ջախջախման համար:

Հայտնի յե այն բացառիկ նշանակութիւնը, վոր միշտ տվել ու տալիս է ընկեր Ստալինը իրապէս գիտական, հեղափոխական թեորիային:

Իսկական գիտութեան, գիտական մտավոր կրթութեան բացակայութեանն արդի բուրժուական դպրոցում հետեւանք ե բուրժուական գիտութեան և փրկսոփայութեան կողմից որչեղտիվ ճշմարտութեան ժխտման, իրական գիտութեան ժխտման:

Սորհրդային դպրոցում տրվող իսկական գիտութեան, գիտական մտավոր կրթութեան մեթոդաբանական հիմքը հանգիստանում է մարքս-լենինյան մատերիալիստական իմացաբանութեանը, վորի փայլուն սահմանումն ու բնութագրումը տալիս է ընկեր Ստալինը «Ի հակադրութեան իդեալիզմին, վորը ժխտում է աշխարհի և նրա որինաչափութեանների ճանաչողութեան հնարավորութեանը, չի հավատում մեր գիտելիքների առաջնութեանը»:

Նը, չի ընդունում որչեղտիվ ճշմարտութեան և գտնում է, վոր աշխարհը լի յե «ինքնին իրերով», վորոնց գիտութեանը յերբեք չի կարող ճանաչել, — մարքսիստական փրկսոփայական մատերիալիզմը յենում է այն բանից, վոր աշխարհը և նրա որինաչափութեանները միանգամայն ճանաչելի յեն, վոր բնութեան որենքների վերաբերյալ մեր գիտելիքները, վորոնք ստուգված են փորձով, պրակտիկայով, ստույգ գիտելիքներ են, վորոնք որչեղտիվ ճշմարտութեանների նշանակութեանն ունեն, վոր աշխարհում չկան անճանաչելի իրեր, այլ կան միայն իրեր, վորոնք դեռ ըմբռնված չեն, վորոնք գիտութեան և պրակտիկայի ուժերով կրացահայտվին ու կճանաչվին» (Ստալին — «Իրականութեան ու պատմական մատերիալիզմի մասին», Համհ(բ) պատմութեան համառոտ գասընթաց, հջ 157):

Առաջավոր հեղափոխական թեորիայի, գիտութեան նշանակութեանը բղիւում է գիտական կոմունիզմի վողջ ուսմունքից, աշխարհը վերափոխելու համար այն գիտականորեն ճիշտ ճանաչելու անհրաժեշտութեանից, կապիտալիստական աշխարհի կործանման ու նոր, անդասակարգ, պլանաչափ կադմակերպված սոցիալիստական հասարակութեան կառուցելու համար գիտութեան տիրապետման բացառիկ նշանակութեանից:

✓ Հայտնի յե այն վիթխարի պայքարը, վոր տարել են ընկերներ Լենինը և Ստալինը, և տանում է ընկեր Ստալինը, մեր կուսակցութեանը՝ բանվոր դասակարգի կողմից առաջավոր թեորիային տիրապետելու համար:

Դա արտահայտվել է ամենից առաջ ամենաառաջավոր ու հեղափոխական թեորիայի՝ մարքսիզմ-լենինիզմի, բոլշևիզմի տիրապետման ուղղութեամբ:

Ընկեր Ստալինը բազմաթիւ առիթներով նշել է թեորետիկ մտքի հետ մնալը մեր սոցիալիստական շինարարութեանից, մեր պրակտիկ հաջողութեաններից և ցույց է տվել այդ հետ մնալու վտանգը: «Մինչդեռ անհրաժեշտ է, վոր թեորիական աշխատանքը վող միայն հասնի պրակտիկ աշխատանքի հետեից, այլ և անցնի նրանից՝ զինելով մեր պրակտիկներին սոցիալիզմի հաղթութեան համար մղած նրանց պայքարում», վորովհետեւ «թեորիան, յեթե նա իսկապէս թեորիա յե, պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզութեան, վստահութեան՝ աշխատանքում»:

քի մեջ, հավատ գեպի մեր գործի հաղթությունը» (Ստալին— «Ագրարային քաղաքականության հարցերի շուրջը ԽՍՀՄ-ում», «Լենինի դմի հարցերը», էջ 446): Սակայն «Թեորիան սոցիալիզմի և դառնում, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այնպես, ինչպես պրակտիկան ել կույր է դառնում, յեթե նա չի լուսավորում իր ճանապարհը հեղափոխական թեորիայով» (Ստալին— «Լենինի դմի հիմունքների մասին», «Լենինի դմի հարցերը», էջ 27):

Ի տարբերություն մարքսիզմի առանձին ցիտատներին կառույց, մարքսիզմը ձևականորեն ընդունող, բայց նրա հեղափոխական ելույթունն ու վոգին ժխտող, իրականում մարքսիզմից հրաժարվող ամեն կարգի մենշևիկների, իսկական հեղափոխական մարքսիստը «իր գործունեության մեջ հենվում է վոլ թե ցիտատներին ու սոցիալիզմի վրա, այլ գործնական փորձի վրա, իր ամեն մի քայլը ստուգելով փորձով, սեփական սխալների վրա սովորելով և ուրիշներին նոր կյանք կառուցել սովորեցնելով» (Ստալին— «Լենինն իբրև ՌԿԿ կազմակերպիչ և առաջնորդ», «Լենինի մասին», էջ 4):

«Մարքսիզմը պահանջում է հին ֆորմուլաների բարելավում ու հարստացում՝ նոր փորձի հաշվառման հիման վրա, — պահպանելով մարքսիզմի տեսակետը, պահպանելով նրա մեթոդը...» (Ստալին— «Еще раз о социал-демократическом уклоне в нашей партии», Об оппозиции, էջ 510):

«Դիտությունը հենց նրա համար է կոչվում գիտություն, վոր նա չի ճանաչում ֆեոդալներ, չի վախենում ձեռք բարձրացնել մեռնողի, հնի վրա և նրբագոյաց կերպով ունկնդրում է փորձի, պրակտիկայի ձայնին» (Ստալին— «Մտախառնվականների առաջին համամիութենական խորհրդակցությանն արտասանած ճառից», «Լենինի դմի հարցերը», 11-րդ հր. էջ 502): 1938 թ. մայիսի 17-ին կրեմլում՝ բարձրագույն դպրոցի աշխատողների ընդունելության ժամանակ արտասանած իր ճառում ընկեր Ստալինը տալիս է խորհրդային իսկական, առաջավոր գիտության փայլուն ընթացիկը. դա այն գիտությունն է, վոր սերտորեն կապված է ժողովրդի հետ, ծառայում է ժողովրդին, վորը չթերազնահատելով գիտության մեջ հաստատված տրադիցիաների ուժն ու նշանակությունը՝ չի դառնում գրանց

ստորուկը միաժամանակ, այլ խիղախություն ունի հին տրադիցիաները, դրույթները փոքրելու, յերբ դրանք արգելակի յեն վերածվում առաջադիմության համար, և վորը գիտի նոր տրադիցիաներ, նոր նորմաներ, նոր դրույթներ ստեղծել:

Նման թեորիայի ու գիտության տիրապետումն է, վոր ռժանդակում է մարդկանց կոմունիստական դաստիարակության, նրանց գիտական, մտավոր կրթության՝ զարձակելով նրանց նոր հասարակարգի գիտակից ու ձեռնհաս կառուցողներ:

Նման գիտության տիրապետմանն է կոչվում ընկեր Ստալինը բոլորիս, հատկապես մեր յերիտասարդությանը:

1925 թ. ապրիլի 15-ի իր նամակում— «Պրոլետարական ուսանողության համամիութենական առաջին կոնֆերանսի առթիվ» — ընկեր Ստալինը անողոքաբար խարազանում ու ծաղրում է այն կոմունիստ ուսանողներին, վորոնք գերադասում են զբաղվել «բարձր քաղաքականությանը», իրենց ժամանակի յերկու յերրորդ մասը սպանելով «համաշխարհային հարցերի մասին» մզվող անվերջ վիճաբանություններով, ժամանակ ու ուշադրություն չեն նվիրում գիտությունների տիրապետմանը, չհասկանալով ու անտեսելով, վոր չի կարելի ղեկավարել խոցիալիստական հասարակության կառուցումը՝ առանց գիտություններին տիրապետելու: Յեթե կապիտալիստական յերկրներում բացակայում են իսկական գիտության ազատ զարգացման պայմանները, մեր յերկիրը բոլոր հնարավորություններն ունի՝ կապանքներից ազատ գիտությունների միջնաբերդն ու ոջախը դառնալու (Լենին և Ստալին— Յերիտասարդության մասին, Պետհրատ 1939 թ., էջ 309):

Դիտության տիրապետության անհրաժեշտության խնդիրն ավելի սուր կերպով դնում է ընկեր Ստալինը ՀամԼԿՑԵՄ համամիութենական 8-րդ համագումարում 1928 թ. մայիսի 16-ին արտասանած իր ճառում: Այդ անհրաժեշտությունն առանձնապես սուր է դառնում մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման կապակցությանը, արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը զրազեծ ու կուլտուրական, գիտության ու տեխնիկային տիրապետած կազմի տալու պահանջով: Իսկ կառուցել և ղեկավարել իմացող մարդիկ մեզ մոտ չափազանց քիչ են. և ընդհակառակը, այդ ընդգրկվածում տգիտությունը մեղանում ան-

չափ եւ Դեռ ավելին, մեղանում կան մարդիկ, վորոնք պատրաստ են գովերգելու մեր անկուլտուրականությունը: Յեթե դու անգրագետ ես, կամ գրում ես սխալներով և պարծենում ես քո հետաքննություններով, ուրեմն, դու «գաղգահի» բանվոր ես, հարգ ու պատիվ ունես: Յեթե դու ազատվել ես անկուլտուրականություններից, սովորել ես գրել, կարգալ, տիրապետել ես գիտությանը, ուրեմն դու ոտար ես, «կտրվել ես» մասսաներից, այլևս բանվոր չես: Յես կարծում եմ, վոր մենք վոչ մի քայլ առաջ չենք շարժվի, մինչև վոր արմատախիլ չանենք այդ բարբարոսությունը և վայրենությունը: Բանվոր դասակարգը չի կարող դառնալ յերկրի իսկական տերը, յեթե նա չկարողանա ազատվել անկուլտուրականություններից, յեթե նա չկարողանա ստեղծել իր սեփական ինտելիգենցիան, յեթե նա չտիրապետի գիտությանը և չկարողանա կառավարել տնտեսությունը գիտության հիման վրա» (Լենին և Ստալին—Յերիտասարդության մասին, էջ 337):

Յեթե քաղաքացիական պատերազմի շրջանում կարելի չեր թշնամու գիրքերը վերցնել ու հաղթել քաջությամբ, կտրիճությամբ, հեծելազորային զրոհով, մեր յերկրի տնտեսական խաղաղ շինարարության պայմաններում նման միջոցներով վոչինչ չի կարելի անել: Կառուցելու համար պետք է գիտենալ, պետք է տիրապետել գիտությանը, իսկ գիտենալու համար պետք է սովորել, սովորել համաուրեն, համբերատար կերպով: Սովորել ամենքից,—և՛ թշնամիներից, և՛ բարեկամներից, մանավանդ թշնամիներից: Սովորել ատամները սեղմած, առանց վախենալու, վոր թշնամիները կծիծաղեն մեզ վրա, մեր տգիտության վրա, մեր հետաքննությունների վրա: Մեր առաջ կանգնած է մի բերդ: Այդ բերդը կոչվում է գիտություն՝ իր գիտելիքների բազմաթիվ ճյուղերով: Այդ բերդը պետք է վերցնենք՝ ինչ գնով էլ լինի: Այդ բերդը պետք է վերցնի յերիտասարդությունը, յեթե նա ուզում է լինել նոր կյանքի կառուցող, յեթե նա ուզում է դառնալ հին գավառիայի իսկական փոխարինողը» (Լենին և Ստալին—Յերիտասարդության մասին, էջ 338):

«Տարրական ու միջնակարգ դպրոցի մասին» 1931 թ. սեպտեմբերի 5-ի իր վորոշման մեջ ՀամԿ(բ) Ստալինյան Կենտկոմը նշելով մեր դպրոցի ունեցած հաջողություններն անցած տարիների ընթացքում, միաժամանակ արձանագրում է, վոր

մեր դպրոցը դեռ չի համապատասխանում աճած հսկայական պահանջներին: Կենտկոմը գտնում է, վոր ներկա մոսկնտին մեր դպրոցի արմատական քերությունն այն է, վոր ուսուցումը դպրոցում բավարար ձավալով հանրակրթական գիտելիքներ չի տալիս:

Մեր դպրոցի արմատական թերություն հիմնական պատճառներից մեկը Կենտկոմը համարում է «դպրոցի մահացման» հակալենինյան թեորիան և դրանից բխող «պրոյեկտների մեթոդը», վորոնք փաստորեն տանում էլին դեպի դպրոցի քայքայում:

Դպրոցի մասին իրենց հետագա վորոշումների մեջ մեր կուսակցության Կենտկոմը և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը հետևողական կերպով մերկացնում, դատապարտում են «դպրոցի մահացման» թեորիայից բխող ազավաղումները ուսուցիական աշխատանքների կազմակերպման («լաբորատոր-քրիզագային մեթոդ»), ուսումնական ծրագրերի («կոմպլեքսային ծրագրեր»), ուսուցման մեթոդների, դասագրքերի բնագավառում և այլն, այսպիսով մեր դպրոցը, հակառակ լուսավորության որդաններում բուն դրած ժողովրդի գիմակավորված թշնամիների ջանքերի, գուրս բերելով իսկական բուլշևիկյան ուզու վրա:

Հայանի յի, վոր «դպրոցի մահացման» թեորիան, վորի վոգեշնողներից մեկը Մ. Պոկրովսկին էր, փորձելով խորհրդային դպրոցից դուրս քել ամեն մի իսկական գիտություն, հատկապես առանձին յեռանդ հանդես բերեց պատմությունը վորպես գիտություն ու ուսուցիական առարկա լիվիզացիայի յենթարկելու գծով:

Կառուցողիկ և ընկեր Ստալինի դերը հատկապես մարքս-լենինյան պատմության դարգացման ասպարիզում: Բավական է հիշատակել ընկեր Ստալինի նամակը «Пролетарская революция» ամսագրի խմբագրությունը՝ «Բուլշևիկիզմի պատմության մի քանի հարցերի մասին», ընկերներ Ստալինի, Ժգանովի, Կիրովի, չխողությունները ԽՍՀՄ-ի պատմության և նոր պատմության դասագրքերի կոնսպեկտների աթիվ, ընկեր Ստալինի նամակը ՀամԿ(բ) պատմության դասագրքի կազմողներին՝ ՀամԿ(բ) պատմության դասագրքի մասին, ընկեր Ստալինի խմբագրությունը ու անմիջական մասնակցությամբ կազմված «ՀամԿ(բ) պատմության համառոտ դասընթացը», ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և ՀամԿ(բ) ԿԿ-ի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումը ԽՍՀՄ-ի դպրոցի



րոցներում քաղաքացիական պատմութեան դասավանդման մասին, ԽՍՀՄ-ի Ժողովրդական և Համկ(բ)Կ ԿԿ-ի 1936 թ. հունվարի 26-ի վերջումը պատմութեան դասագրքերի կոնսպեկտների մասին, Համկ(բ)Կ ԿԿ-ի 1938 թ. նոյեմբերի 14-ի վերջումը «Կուսակցական պրոպագանդի դրվածքի մասին» կապված «Համկ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացի» լույս ընծայման հետ»:

Վերևում թված ստալինյան դոկտրինաները մեծ կարևորություն են ներկայացնում վաղ միայն պատմութեան, այլև մյուս ուսումնական առարկաների դասագրքերի, դասավանդման համար: Այս դոկտրինաներում, բացի պատմութեան խնդիրների իրապես մարքս-լենինյան դրվածքից ու լուծումից, մենք գտնում ենք և չափազանց կարևոր մանկավարժական-մեթոդական բնույթի ցուցումներ, այսպես որինակ՝ «ԽՍՀՄ դպրոցներում քաղաքացիական պատմություն դասավանդելու մասին» ԽՍՀՄ Ժողովրդական և Համկ(բ)Կ ԿԿ-ի 1934 թ. մայիսի 16-ի վերջում մեջ ասվում է. «Աշակերտների կողմից պատմութեան դասընթացը հաստատապես յուրացնելու վճռական պայման է հանդիսանում պատմական ժամանակագրական հաջորդականութեան պահպանումը պատմական անցքերի շարագրման մեջ, աշակերտների հիշողության մեջ անպայման ամրապնդելով պատմական կարևոր յերեմիությունները, պատմական գործիչներին, ժամանակագրական թվականները: Պատմութեան միայն այսպիսի դասընթացը կարող է ապահովել աշակերտի համար պատմական նյութի անհրաժեշտ մատչելիությունը, զննականությունը և կոնկրետությունը, այս հիման վրա միայն հնարավոր է պատմական անցքերի ճիշտ վերլուծությունն ու ճիշտ ընդհանրացումը, վորոնք աշակերտին մոտեցնում են պատմութեան մարքսիստական ըմբռնմանը»:

«Համկ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացը» խորհրդային դասագրքի իդեալական նմուշն է: Այդ գիրքը վորպես մարքսիզմ-լենինիզմի բնագավառում հիմնական գիտելիքների հանրագիտարան՝ տալիս և բուլշևիզմի գիտական պատմությունը: Նա կուսակցության պատմության միասնական մի ձեռնարկ է, վորտեղ արված է կուսակցության պատմության ու մարքսիզմ-լենինիզմի հիմնական հարցերի պաշտոնական, Համկ(բ)Կ ԿԿ-ի կողմից ստուգված մեկնաբանումը և վորը վերջ է դրել կուս. պատմության շարագրման ասպարիզում յեղած քմահաճույ-

թին, շփոթին, դանազան տեսակետների առատութեանը: Մարքս-լենինյան մեթոդոլոգիայի վրա խարսխված բարձր գիտականություն, ստուգված, ճշտված փաստերի, այդ փաստերի մարքս-լենինյան մեկնաբանման հետ միասին մենք «Համկ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացում» ունենք մտքերի շարագրման իդեալապես ճշգրիտ, պարզ ու մեկին, մոտո՛ված ու հղկված ձև-վակերպումներ, լեզվի մաքսիմալ մատչելիություն ու պարզություն՝ առանց վորևէ հասարակացման (упрощенство) և գոեհեղացման:

✓ «Դպրոցի մահացման» հակալենինյան թեորիայի հետ սերտ կապված է յեղել մանկաբանական կեղծ գիտությունը: Մանկաբանական կեղծ գիտության հակամարքսիստական դրույթների թվին է պատկանում այն «որենքը», թե «չյերեխաների ճակատագիրը ֆատալիստորեն պայմանավորված է կենսաբանական և սոցիալական Վործոններով, ժառանգականության և ինչ վոր անփոփոխ միջավայրի աղդեցությամբ» (Համկ(բ)Կ ԿԿ 1936 թ. հունիսի 4-ի վերջումից) — «Լուսժողովուրդների սխառնում յեղած մանկաբանական խեղաթյուրումների մասին»: Հիշյալ «որենքից» բղխում է կաղմակերպված դատարարականության անհնարությունը, դպրոցի, ուսուցչի դերի ժխտումը:

Անփոփոխ միջավայրի տեսությունը և ժառանգականության հակադիալեկտիկական ըմբռնումը մանկաբանների կողմից ողտագործվում էր ապացուցելու համար «շահագործող դատակարգերի և քարձր ռասաների հատուկ «շնորհալիությունն ու գոյութեան հատուկ իրավունքները և մյուս կողմից աշխատավոր դասակարգերի ու «ցածր ռասաների» ֆիզիկական ու հոգեոր դատապարտվածությունը (Համկ(բ)Կ ԿԿ-ի 1936 թ. հունիսի 4-ի վերջումից):

Մանկաբանական կեղծ գիտության այս սեակցիոն, հակադիալեկտիկական թեորիայի փայլուն մերկացումն է հանդիսանում ընկեր Ստալինի «ձեռնամեքեյան հեղափոխության միջոցային բնույթը» հոդվածի հետևյալ հատվածը: «Առաջին բուն «ընդունված էր» կարծիք, թե աշխարհն սկզբից ի վեր բաժանված է յեղել ստորին և վերին ռասաների, սեակի ու սպիտակների, վորոնցից առաջիններն ընդունակ չեն քաղաքակրթութեան և դատապարտված են շահագործման առարկա լինելու:

խակ յերկրորդները հանդիսանում են քաղաքակրթության միակ կրողները, վորոնք կոչված են առաջիններին շահագործելու: Այժմ այդ առասպելը պետք է համարել ջախջախված ու դեն շարտված: Հոկտեմբերյան հեղափոխության կարևորագույն հետևանքներից մեկն այն փաստն է, վոր նա այդ առասպելին մահացու հարված հասցրեց, գործով ցույց տալով, վոր խորհրդային դարգացման հունը ներքաշված ազատագրված վոչ-յեվրոպական ժողովուրդներն ամենևին ել ավելի պակաս ընդունակ չեն առաջ շարժելու իրոք առաջավոր կուլտուրան և իրոք առաջավոր քաղաքակրթությունը, քան յեվրոպական ժողովուրդները» (Ստալին—«Լենինի դմի հարցերը», հջ 309—310):

«Դպրոցի մահացման» թևերիայից և մանկաբանական աղավաղումներից ել բղխում էր անթույլատրելի, հակալենինյան վերաբերմունքը դեպի խորհրդային ուսուցիչը, նրան ավելորդ, անգամ ֆրասակար համարելը մեր մատաղ սերնդի դաստիարակության դործում, այդ ուսուցչին արհամարհանքով «ֆուսլյա-րավոր մարդ» անվանելը և այս բոլորի հետևանքով ամեն կերպ խորհրդային ուսուցչին յերեխաների դաստիարակության ու ուսուցման գործից մեկուսացնելը:

Ակնհայտ է մեր ինտելիգենցիայի կարևորագույն գործադու-նի՝ խորհրդային ուսուցչության նկատմամբ նման վերաբերմունքի վողջ հակակուսակցական, խուլիգանական բնույթը, նման վերաբերմունքի հատուկ ֆրասակարությունը մեր առջև ծառացած՝ կուլտուրական հեղափոխության վիթխարի խնդիրների ու անելիքների պայմաններում:

Հին ինտելիգենցիայի հետ միասին նախկին ուսուցչությունը նույնպես Հոկտեմբերյան հեղափոխության օրերին իր մեջ ունեւր այն յերեք շերտերի ներկայացուցիչներին, վորոնց բնու-թագրումը ապլիս է ընկեր Ստալինը 12-րդ կուս. համագումա-րում տված իր զեկուցման մեջ: Ուսուցչության վերնախավը նույնպես բռնում է բացարձակ թշնամանքի ու սաքստաժի ուղին, մյուս մասը տատանվում և սպասում էր, վերջապես յերրորդ՝ հիմնական մասը միացավ ժողովրդին և գնաց խորհրդային իշխանության հետևից:

Մեր կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը ընկեր Լենինի ու ընկեր Ստալինի զեկավարությամբ սկզբից

եկթ չափազանց զգուշ, իմաստուն քաղաքականություն են վա-րել ուսուցչության, դրա թվում և նրա տատանվող մասի նկատ-մամբ, համբերությամբ ոգնելով այդ ուսուցչությանն ազատու-գրվելու հին կարգերից ժառանգած բուրժուական ու մանր-բուր-ժուական նախադաշարմունքներից, հատկանշալու մեր կուսակցու-թյան ու խորհրդային իշխանության հոյակապ խնդիրները կուլ-տուրական շինարարության ասպարիզում, լծվելու այդ խնդիր-ների կենսագործման աշխատանքին և միաժամանակ վերադաս-տիարակվելու կոմունիզմի վողով: Միևնույն ժամանակ պետք էր ոգտագործել անգամ այն ուսուցիչների գիտելիքները, վորոնք իրենց հայացքներով ամբողջապես մերը չէին:

Յեկ ուսուցչությունը մեր կուսակցության ոգնությունը ու զեկավարությունը կատարում է իր շրջադարձը դեպի խորհրդ-ային իշխանությունը: Մեր կուսակցության 15-րդ համագու-մարում ընկեր Ստալինը՝ մասնանշելով այդ շրջադարձը՝ ասում է, «Յես ել չեմ խոսում գյուղական աշխատավորական ինտելիգեն-ցիայի, հատկապես ուսուցչության մասին, վորը վաղուց է դար-ձել խորհրդային իշխանության կողմը և վորը չի կարող չվող-ջունել զպրոցական գործի դարգացումը գյուղում» (Сборник Ленин и Сталин, III т., հջ 241—242): Ուսուցչության հին կադրերի վերադաստիարակման հետ միասին հեկայական աշխա-տանք է կատարված և նոր ուսուցչական կադրերի պատրաստման գծով: Այժմ մենք ունեւր ուսուցիչների մեկ միլիոնանց հզոր բանակ:

Ուսուցչի բարձր ու պատվավոր դերը մեկ մոտ փայլուն կերպով բնութագրել և ընկեր Լենինը իր «Եյեր օրագրից» նշա-նավոր հողվածում. «Մեզանում ժողովրդական ուսուցիչը պետք է դրվի այնպիսի բարձրության վրա, վորի վրա նա յերեք կանգ-նած չի յեղել, կանգնած չե և չի ել կարող կանգնած լինել բուր-ժուական հասարակության մեջ» (Լենին, 27-րդ հ., հջ 516):

Համամիութենական ուսուցչական համագումարին ուղղված իր վողջույնի մեջ (1925 թ. հեկվարի 6) ընկեր Ստալինը ասում է. «Ժողովրդական ուսուցիչների զորասյունը կազմում է սոցիալիզմի հիմունքներով նոր կյանք կառուցող մեր յերկրի աշխատավորների մեծ բանակի ամենակարևոր մասերից մեկը»:

«Ուսուցիչների համար անձնական կոչումներ մացնելու կարգի և ուսուցիչների, դպրոցների վարիչների ու գիրեկտոր-ների նշանակման մասին» խՍՀՄ Ժողկոմխորհի և համկ(բ)ի

ԿԿ-ի 1936 թ. ապրիլի 10-ի վերոշման մեջ նշվում է, վոր ուսուցչութունն աճել ու զարձակ է հզոր կուլտուրական ուժ:

Ինչպիսի ուսուցչութունը լենինյան-ստալինյան հոգատար վերաբերմունքի և նրա աշխատանքի բարձր գնահատականի արտահայտություններից են մեր կուսակցության Կենտկոմի ու կառավարության 1936 թ. վերոշումներն ուսուցչիններին անձնական կոչումներ տալու և նրանց աշխատավարձը բարձրացնելու մասին, 1939 թ. ապրիլի քան չորս հազար լավագույն գյուղական ուսուցչիններին խորհրդային միության շքանշաններով պարգևատրելը, ինչպես և բազմաթիվ ուսուցչինների ԽՍՀՄ-ի, միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդների, աշխատավորների տեղական խորհուրդների գերատեսու ընտրելը:

III. ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ-ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ընկեր Ստալինի աշխատությունները, հոգվածները, ճառերն ու յերևթները չափազանց մեծ հետաքրքրություն են ներկայացնում և խիստ ուսանելի յեն նաև մանկավարժական-գիղականական տեսակետից:

Առհասարակ մեծ, հանճարեղ մարդկանց, քաղաքական գործիչների ու մտածողների, մանավանդ պրոլետարիատի մեծ ուսուցչիններ Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի մեծությունն ու հանճարեղությունն արտահայտվում է նաև նրանով, վոր նրանք կարողանում են ամենախոր մտքերը, բարդ քաղաքական խնդիրները, փիլիսոփայական պրոբլեմները շարադրել, արտահայտել պարզ, մատչելի ձևով, և դրանով իսկ իրենց գաղափարները դարձնել միլիոնավոր մասսաների սեփականություն, դրա հետ միասին պահպանելով խնդիրների լուսաբանման բարձր գիտականությունը, առանց հասարակացման ու գոեհիացման:

Ընկեր Ստալինը Կրեմլյան կուրսանտների յերեկույթում 1924 թ. հունվարի 28-ին Լենինի մասին արտասանած իր ճառում հետևյալ կերպ է տալիս իր ապավորությունները Ցամերֆորսի կոնֆերանսում ընկիր Լենինի արտասանած յերկու ճառի մասին. «Յերեկի եյին այդ կոնֆերանսիայում Լենինի արտասանած յերկու ճառերը՝ ընթացիկ մոմենտի և ազրարային հար-

ցի մասին... Համոզելու անսովոր ուժը, փաստարկման պարզունթյունն ու հստակությունը, կարճ ու ամենքին հասկանալի Ֆրազները, ցուցամոլություն բացակայությունը, գլխապտույտ ժեստերի և ապավորություն զործելու ձգտող եֆեկտավոր ֆրազների բացակայությունը, — այդ ամենը Լենինի ճառերը նպաստավոր կերպով տարբերում էր սովորական «պառլամենտական» հետադրների ճառերից:

Բայց ինձ այն ժամանակ Լենինի ճառերի այդ կողմը չեր գերում: Ինձ գերում էր Լենինի ճառերի մեջ տրամաբանություն այն անհաղթահարելի ուժը, վորը մի քիչ չոր է, բայց դրա փոխարին հիմնավորապես տիրում է լսարանը, աստիճանաբար ելկարականացնում նրան և հետո, ինչպես ասում են, գերի վերցնում առանց մնացորդի: Յիս հիշում եմ, թե ինչպես այն ժամանակ պատգամավորներից շատերն ասում էյին. «Լենինի ճառերի մեջ տրամաբանությունը ինչ-վոր ամենագոր շոշափուկներ են, վորոնք քեզ չորս կողմից աքցաններով ցանցում են և վորոնց գրկից դուրս պրծնելու ուժ չկա. կամ անձնատուր եղիր, կամ վճռի լիովին խորտակվել» (Ստալին — «Լենինի մասին», էջ 24—25):

Լենինի հետադրական արվեստի սույն բնութագրումն ամբողջովին վերաբերում է և իրեն՝ ընկեր Ստալինին:

Հանրի Բարրյուն իր «Ստալին» աշխատության մեջ այդ տեսակետից համեմատելով ընկեր Ստալինին Լենինի հետ՝ ասում է.

«Լենինին հատուկ խոսելու պարզ, հստակ, սպառիչ մաներան բնագղարար յուրացվել է և ընկեր Ստալինի կողմից: Այդ մաներայից նա յերեք չի շեղվել... Եւ միշտ յեղել է և միում է ել ավելի գուսպ իր խոսքերում, քան Լենինը... Բայց խոսելով գուսպ, մի քիչ խուլ ձայնով, առանց դիմախոսական եֆեկտների, իր միտքն ապացուցելու միակ նպատակով, Ստալինը՝ Լենինի նման կապում է իր հետ, համոզում և ցնցում է իր ճառերի բովանդակությամբ, վորոնք տպավորված ձևով ել պահպանում են իրենց վսեմությունը, իրենց վողջ ճարտարապետական տրամաբանությունը» (Анри Барбюс — «Сталин», էջ 19—20):

Ստալինը խոսում է հանգիստ ձայնով, կարճ ֆրազներով, դրա փոխարեն այնպես պարզ, այնպես հստակ, այնպես համոզիչ: Առաջին իսկ բառերից յես գրավվեցի մտքի տրամաբանու-

թյամբ, կապակցվածությամբ, անուստիանությունների պարզու-
թյամբ: Ստալինը հարցն ուղղակի յեր դնում, վերլուծում այն և
տալիս լուծումը: Նա խոսեց 20 ընդհանուր վոչ ավելի: Յերբ նա
վերջացրեց, ինձ համար ամեն բան պարզ էր» (Анри Марти—
«Сталин в моей жизни», «Правда» 24-го декабря 1939 г.):

«Նա սկսում է խոսել վոչ բարձր, ինչպես միշտ, — հանգիստ,
բառը բառից անջատելով, պարզ կերպով ձևակերպելով յուրա-
քանչյուր միտք, գտնելով ամեն մեկին հասկանալի՝ տալով
հստակ և պարզ ձևակերպում...» (Ал. Толстой, «За родину, за
Сталина», «Правда» 25-го декабря 1939 г.):

Շարադրվող, լուսաբանվող թեման ընթերցողներին, ուն-
կենդիներին միանգամայն հասկանալի գործնելու, ճիշտ ու
հեշտ ըմբռնումն ապահովելու համար, ընկեր Ստալինը քեման
բաժանում է կարգերի, գրանով իսկ առանձնացնելով, ընդգծելով
ու ընթերցողների ուշադրությունը հրավիրելով առանցքային,
հիմնական խնդիրների վրա: Ընկեր Ստալինի մասին իր հիշողու-
թյուններում (Г. Нинуа, «Первые уроки революционной
борьбы» «Коммунист» 17-го декабря 1930 г.) Գ. Նինուան
գրում է. «Թեման, ինչպիսին էլ նա լիներ, ընկեր Ստալինը միշտ
ստորաբաժանում էր հարցերի»:

Թեման ճշտորեն սահմանափակված, տրամաբանորեն շաղկապ-
ված ու իրար հաջորդող ու թվարկվող հարցերի բաժանելու այս
միանգամայն ճիշտ ու կարևոր մեթոդին է հետևում ընկեր Ստա-
լինը համարյա իր բոլոր աշխատություններում ու յեկույթնե-
րում: Բերենք միայն մի քանի որինակներ.

ա) «Լենինի դմի հիմունքների մասին» աշխատության մեջ,
«Լենինի դմի պատմական արժանները» գլխում, իմպերիալիզմի
շրջանում կապիտալիզմի հատկապես սրված հակասությունները
բացատրելիս՝ ընկեր Ստալինը թվարկում է այդ հակասություն-
ներից յերեքը. «Առաջին հակասությունը, դա հակասությունն է
աշխատանքի և կապիտալի միջև... Յերկրորդ հակասությունը, —
դա հակասությունն է տարբեր ֆինանսական խմբերի ու
իմպերիալիստական պետությունների միջև... Յերրորդ հակասու-
թյունը, — դա հակասությունն է մի բուռն տիրապետող «քաղա-
քակիրթ» ազգերի և աշխարհի հարյուր միլիոնավոր գաղութա-
յին ու կախյալ ժողովուրդների միջև» (Ստալին, «Լենինի դմի
հարցերը», էջ 12—13):

բ) «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ուսական կոմու-
նիստների տակախական» աշխատության մեջ «Հոկտեմբերյան հե-
ղափոխության արտաքին և ներքին պայմանները» առաջին
գլխի ընկեր Ստալինը սկսում է ալպաես. «Արտաքին կարգի
յերեք հանգամանքներ վորոշեցին այն համեմատական հեշտու-
թյունը, վորով պորկտարական հեղափոխությանը Ռուսաստանում
հաջողվեց փշրել իմպերիալիզմի շղթաները և, այդպիսով, տալա-
լի բուրժուազիայի իշխանությունը»: Յեվ այնուհետև ընկեր
Ստալինը թվարկում ու բացատրում է այդ յերեք հանգամանք-
ները:

«Բայց, բացի արտաքին կարգի հանգամանքներից, Հոկտեմ-
բերյան հեղափոխությունն ունեց կլի մի ամբողջ շարք ներքին
բարենպաստ պայմաններ, վորոնք հեշտացրին նրա համար հաղ-
թությունը» (Ստալին — Նույն տեղ, էջ 118—119):

Յեվ այնուհետև ընկեր Ստալինը մի առ մի թվարկում և
բացատրում է այն վեց ներքին բարենպաստ պայմանները, վո-
րոնք արտաքին կարգի յերեք հանգամանքների հետ միասին
պայմանավորեցին Հոկտեմբերյան հեղափոխության հաղթության
համեմատական հեշտությունը:

գ) Յերբեմն, վորպեսզի խնդիրներն ավելի հստակ ձևով
դրվեն ու ըմբռնվեն, ընկեր Ստալինն ինքն է հարցը
տալիս և ապա արված հարցին պատասխանում:

Այդպես է վարվում ընկեր Ստալինը, որինակ, «Պատասխան
ընկեր կոլտնտեսականներին» հոդվածում:

«Առաջին հարց: Վճրն է գյուղացիական հարցում յեղած
սխալների արմատը:

Պատասխան: Սխալ մոտեցումը դեպի միջակը...

Յերկրորդ հարց: Վճրոնք են կոլտնտեսային շարժման
մեջ յեղած գլխավոր սխալները:

Պատասխան: Դրանք, այդ սխալները, առնվազն յերեք են...

...Տասերորդ հարց: Վճրն է կոլտնտեսությունների մերձա-
վորագույն գործնական խնդիրը:

Պատասխան: Կոլտնտեսությունների մերձավորագույն գործ-
նական խնդիրն է՝ պայքարել ցանքի համար...» (Ստալին — «Լե-
նինի դմի հարցերը», էջ 487—507):

դ) «Նոր իրադրություն — տնտեսական շինարարության նոր

խնդիրներ» ճառում. «Մեր արդյունաբերությունը զարգացման այդ ինչ նոր պայմաններ են. վորտեղից ծագեցին նրանք:

Նրանք, այդ նոր պայմանները, առնվազն վեցն են» (Ստալին—«Լենինի գծի հարցերը», հջ 662). 1) աշխատուժը, 2) բանվորների աշխատավարձը, 3) աշխատանքի կազմակերպումը, 4) բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի հարցը, 5) շրջագարձի նշաններ հին արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի մեջ, 6) տնտ. հաշվարկի մասին:

Յեւ ընկեր Ստալինի այս պատմական ճառը հաճախ հենց անվանվում է «Ընկեր Ստալինի պատմական վեց ցուցումները» կամ «վեց պայմանները»:

Յերեքն ընկեր Ստալինը մի վորեն յերևույթ բացատրելու համար բերում է հնարավոր այլ՝ սխալ տեսակետը, ապա հերքում, ջանջախում այն ու տալիս իր, միակ ճիշտ լուսաբանումը: Այսպիսի մեթոդն այլևս վսչ մի տեղ չի թողնում տարակուսանքի, տատանման համար, վորովհետեւ այդ ձևով արդեն կանխվում ու լիվիդացիայի յեն յենթարկվում ամեն մի տարակուսանք, տատանում: Այսպես որինակ, կուսակցության 16-րդ համագումարում աված իր հաշվետու զեկուցման մեջ խոսելով կապիտալիստական սխտեմի փլուզման և սոցիալիստական սխտեմի լուրջ հաջողությունների մասին, ընկեր Ստալինը հարցնում է. «Վորոնք են այնքան լուրջ փլուզման պատճառները նրանցում» կապիտալիստների մոտ, և լուրջ եաջադարձումների պատճառները մեզանում» ԽՍՀՄ-ում...

Գուցե հարցի լուծումն այն է, վոր կուլտուրական դրություն մակարդակը մեզանում ավելի բարձր է, քան կապիտալիստական յերկրներում: Դարձյալ վոչ...

...Գուցե այստեղ պատճառը կապիտալիստական յերկրների զեկավարների անձնական հատկություններն են: Դարձյալ վոչ...

Այն ժամանակ ել ինչմեմ է բանը:
...Պատճառը տնտեսության եկոնոմիկական սխտեմների սարբերությունն է մեզանում և կապիտալիստների մոտ...» (Ստալին—«Լենինի գծի հարցերը», հջ 586—588):

Ընկեր Ստալինի մի այլ չափազանց արժեքավոր և ուսանելի ժանկավարժական-դիրքակալական միջոցը—գա կրկնաթյունը, ամփափումը և այդ ձևով հիմնական մտքերն ունկնդիրներին,

ընթերցողների գիտակցության, հիշողության մեջ հիմնովին նմ-րապնդելն է: Որինակ.

ա) «Լենինի գծի հարցերի շուրջը» աշխատության մեջ խոսելով պրոլետարիատի դիկտատուրայի «շարժափոկերի», «լծակների» մասին, վերջում ընկեր Ստալինը կրկնելով՝ ամփոփում է իր ասածները. «Այսպիսով արեմիությունները, վորպես պրոլետարիատի մաստայական կազմակերպություն... խորհուրդները, վորպես աշխատավորների մաստայական կազմակերպություն... կոպերացիան, վորպես գլխավորապես գյուղացիության մաստայական կազմակերպություն... յերիտասարդաթյան միությունը, վորպես բանվորական ու գյուղացիական յերիտասարդության մաստայական կազմակերպություն... և, վերջապես, կուսակցությունը, վորպես հիմնական ուղղություն տվող ուժ պրոլետարիատի դիկտատուրայի սխտեմում... այս է ընդհանուր առմամբ դիկտատուրայի «մեխանիզմի» պատկերը, «պրոլետարիատի դիկտատուրայի սխտեմի» պատկերը» (Ստալին—«Լենինի գծի հարցերը» հջ 117):

բ) «Ագրարային քաղաքականության հարցերի շուրջը ԽՍՀՄ-ում» իր պատմական ճառն ընկեր Ստալինը վերջացնում է «Յեզրակացություններով» (7-րդ պարագրաֆը). «Ահա ընկերներ, վեց հանգուցային հարցեր, վորոնց կողքով չի կարող անցնել մեր մորքսիստ ագրարազեաների թեորիական աշխատանքը: և այնուհետև ընկեր Ստալինը թվարկում է այդ վեց հանգուցային հարցերը:

գ) «Խորհրդային Միության տնտեսական դրության մասին» Լենինգրադի կազմակերպության ակտիվին արած իր զեկուցումը (1926 թ. ապրիլի 13-ին) ընկեր Ստալինը վերջացնում է յեզրակացություններով. «Թույլ տվեք այժմ անցնել յեզրակացություններին:

Նախ և առաջ մենք պետք է առաջ շարժենք մեր յերկրի արդյունաբերությունը...

Յերկրորդ՝ մենք պետք է արդյունաբերություն կառուցողների նոր կադրեր ստեղծենք...

...Ութերորդ՝ մենք պետք է պահպանենք ու ամրապնդենք մեր կուսակցության միասնությունը, մեր շարքերի միաձուլվածությունը» (Сборник Ленин и Сталин, III т., հջ 71):

դ) Կուսակցության 14-րդ համագումարում իր զեկուցումը

ընկեր Ստալինը վերջացնում է հետևյալ ձևով. «Ընկերներ, յես վերջացնում եմ:

Յես խոսեցի մեր արտաքին քաղաքականության մասին... Այնուհետև յես խոսեցի այն հակասությունների մասին, վորոնց շրջանակներում ընթանում են...

Ապա յես խոսեցի մեր յերկրի ներսի այն հակասությունների մասին...

Յես խոսեցի ընկերներ մեր կուսակցության հաջողությունների և սխալների մասին...» (Сталин—«Вопросы ленинизма», ГИЗ 1926 г., № 397—398):

Գ. Նինուան վերևում հիշատակած իր հոգվածում պատմում է, վոր ընկեր Ստալինը հեղափոխական խմբակներում ունեցած իր պարապմունքների ժամանակ չէր անցնում նոր հարցի, մինչև վոր չէր համոզվում, վոր մենք հասկացել ենք իրեն, յուրացրել ենք իր խոսքերը. ընկեր Ստալինը պարապմունքների վերջը միշտ յեզրակացություններ եր անում:

*
*
*

Ընկեր Ստալինի մի այլ չափազանց արժեքավոր մանկավարժական-գիտակարգական միջոցը,—դա ընթերցողներին, ունեղնողներին, բանվորներին մոտիկ, հենց նրանց կյանքից վերցրած կանկրետ որինակների ոգտագործումն է, վորոնց միջոցով նա հաճախ ամենաբարդ փոխադասական խնդիրները հասկանալի յե դարձնում ունեղնողներին: Այսպես, որինակ, վորպեզը ընդհատակյա հեղափոխական խմբակի բանվոր ունեղնողներին բացատրի մարդկանց հասարակական կեցության զարգացումից նրանց հասարակական գիտակցության զարգացման հետ մնալու յերեույթը, ընկեր Ստալինը բերում է կոշկակարի որինակը, այն կոշկակարի, վոր ունեցել է իր փոքրիկ արհեստանոցը, սակայն մրցակցության չղիմանալով, փակել է արհեստանոցը և բանվոր է մտել, ասենք Ադիլխանովի մոտ: Սակայն բանվոր մտնելու նրա նպատակը վոր թե մշտական վարձու բանվոր դառնալն է, այլ փող հավաքելը՝ կրկին սեփական արհեստանոց բանալու: Նշանակում է՝ այդ կոշկակարի հասարակական կեցությունն արդեն պրոլետարական է, բայց նրա գիտակցությունը դեռ պրոլետարական չէ, այլ ամբողջովին մտնը բուրժուական (Ем. Ярославский, «Важнейшие вехи жизни и деятельности

тов. Сталина», «В помощь марксистско-ленинскому образованию», № 10, 1939 г., № 52—53):

Գ. Նինուան իր հիշողություններում պատմում է, վոր ընկեր Ստալինի ձառը միշտ հագեցված եր լինում որինակներով: Ընկեր Ստալինը այնպես եր անում, վոր ունեղնողներն իրենք ել փաստեր, որինակներ բերեն իրենց կյանքից, գործարանից և այլն:

Ընկեր Ստալինը մեծ վարպետությամբ ոգտագործում է և գեղարվեստական գրականությունից, ժողովրդական բանահյուսությունից, զիցաբանությունից բերած որինակները: Բավական է հիշատակել Խորհուրդների Ց-րդ Համամիութենական արտակարգ համագումարում ԽՍՀՄ-ի Սահմանադրության նախադժի մասին իր պատմական գեղեցման մեջ բերած փայլուն, սղանիչ ծաղրով լի որինակները միջազգային շենգրինյան բյուրոկրատների մասին, վորոնք վորոշել են «նսրից ծածկել ԽՍՀՄ-ն», կամ գողության Պեկագեյայի մասին, վորը չգիտե, թե վորտեղ է աջը, վորտեղ՝ ձախը. կամ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1937 թ. փետրվարյան-մարտյան պլենումում յեզրափակել խոսքի մեջ հունական զիցաբանության հերոս Անթեյի որինակը, վորին Հերկուլեսը կարողանում է խեղդել՝ նրան կտրելով իր մայր հողից: Ինչպես հայտնի յե, այս որինակն ընկեր Ստալինը բերում է՝ կուսակցության կողմից մասսաների հետ սերտ կապ պահպանելու, մասսաներից չկտրվելու անհրաժեշտությունն ապացուցելու համար:

Գ. Նինուան հիշատակում է, վոր իր յուրաքանչյուր յեույթին, պարապմունքին ընկեր Ստալինը նախապատրաստվում եր մեծ խնամքով ու բարեխղճությամբ. «Յերբ նա խոսում եր, նրա առաջ գրված եր լինում հուշատետրը կամ ուղղակի մանր գրված թղթի թերթիկներ: Իր յուրաքանչյուր յեույթին նա, ըստ յերեույթին, խնամքով նախապատրաստվում եր»:

Ղեկավարելով ընդհատակյա խմբակների պարապմունքները, ընկեր Ստալինը ոգնում, սովորեցնում եր խմբակի անդամներին գրքից ոգավել, ինքնուրույն կերպով պարապել: Գ. Պարկանին իր հիշողություններում գրում է. «Ընկեր Ստալինը բացատրում եր, թե ինչպես պետք է հասկանալ այս կամ այն գրքի հիմնական բովանդակությունը, ինչպես ոգտվել ժողովուրդի

լային հողավճաններից, անցնողիաններից և անգամ նոթերից (32-
метка) այն դեպքերում, յերբ մի վորեն հարցի մասին չէր
կարելի գտնել բավականաչափ գրականություն: Դա սովորեցնում
էր կոնսպեկտ կազմելուն, քաղվածք կազմելուն: Գրականություն
նշելիս Սաալինը մեզ համար ընտրում էր հանրամատչելի, ապա
ավելի բարդ գրականություն և մանրամասն բացատրում էր,
յեթե ընկերներից վորեն մեկը կարգացածը չէր հասկանում»
(Г. Паркадзе, «Из воспоминаний о нелегальных сталинских
кружках», «Заря Востока», № 46, от 26-го февраля
1939 г. Յիտաւը բերված է ըստ Յեմ. Յարուլալսիու՝ «Важ-
нейшие вехи жизни и деятельности тов. Сталина» «В по-
мощь маркс.-ленинскому образованию» № 10, 1939 г., էջ
37—38):

Հատկապես տարրական և միջնակարգ դպրոցում մանկա-
վարժական աշխատանքի ղեկավարություններից մեկն էլ այն է,
վոր պետք է կարողանալ յերեխաներին տալ ստուգված, բարձ-
րորակ գիտելիքներ, դրանք հաղորդել պարզ, մատչելի ձևով,
սակայն առանց հասարակացման և գոհակացման: Այդ բանում
նույնպես մենք չափազանց շատ բան ունենք սովորելու մեր մեծ
ուսուցիչ ընկեր Սաալինից:

IV. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ — ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒՄ ՆՈՐ ՄՈՐԴՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պրոլետարիատը ամենաառաջադեմ, հեղափոխական դասա-
կարգն է: Նրա ստեղծած հասարակությունը՝ սոցիալիստական-
կոմունիստական հասարակությունը ամենաբարձր ախպի մարդ-
կային հասարակությունն է, վորտեղ առաջին անգամ ստեղծվում
են հնարավորություններ մարդկանց միջև իրապես մարդկային
հարաբերությունների, վորտեղ մարդը զազարում է մարդու հա-
մար դաշդ լինելուց, վորտեղ մարդը վերջնականապես ազատա-
զրբվում է կենդանական պայմաններից և անցնում է իսկական
մարդկային պայմաններին (Ենգելս):

Շահագործական հասարակության, բուրժուական հասարա-
կության մեջ մարդկային լավագույն հատկությունների կրող-
ները աշխատավորներն են, բանվորները, նրանց ներկայացու-

ցիչներն ու գաղափարախոսները, պրոլետարիատի կուսակցու-
թյունը, պրոլետարիատի մեծ ուսուցիչները՝ Մարքսը, Ենգելսը,
Լենինը, Սաալինը:

Պրոլետարիատի ղեկավարության հաստատելով ու անդամա-
կարդ սոցիալիստական հասարակության ստեղծմամբ և առաջին
անգամ հնարավոր դառնում մարդկային բնության ու բնավու-
թյան լավագույն հատկանիշների մասնայական զարգացումն
ու դաստիարակությունը, սոցիալիստական հայրենիքի արժանա-
վայել քաղաքացիների ստեղծումը: Մեր մեծ սոցիալիստական
հայրենիքը այդ մասնայական կոմունիստական դաստիարակու-
թյան ու վերագաստիարակության փայլուն որինակն է հանդի-
սանում:

Ըստ մեր կուսակցության ծրագրի՝ իտերոդային դպրոցի
նպատակն է՝ դաստիարակել մի սերունդ, վոր ընդունակ լինի
վերջնականապես կոմունիզմ հաստատել: Այդ սերունդն իր հոգե-
բանությունը, գիտակցությունը, բարոյական հասկացություն-
ներով ու իր վոլջ վարքադժով արմատապես պետք է տարբերվի
շահագործական հասարակության միջավայրում ծնված, մեծացած
ու դաստիարակված սերնդից:

✓ 1920 թ. կոմսոմգլի 3-րդ համագումարում արտասանած իր
նշանավոր ճառի մեջ ընկեր Լենինը կոմունիստական բարոյակա-
նությունը հետևյալ կերպ է բնորոշում. «Բարոյականությունը,
դա այն է, վորը ծառայում է հին շահագործական հասարակու-
թյան քայքայմանը և բոլոր աշխատավորներին պրոլետարիատի
շուրջը համախմբելու գործին, պրոլետարիատի, վորը կոմունիս-
տական նոր հասարակություն է ստեղծում» (Լենին, 25-րդ հ.,
էջ 392):

այսինքն ընկեր Սաալինը իր բաղմամբով աշխատություններում, հոգե-
վածներում, յեղոյթներում, իսկ ամենից առաջ իր վոլջ կյան-
քով ու գործունեությամբ մեզ ապրիս է նա, կոմունիստական
բարոյականության կրող, նոր, կոմունիստական հասարակություն
կառուցող, իրապես նոր մարդու, լույսավորի փայլուն ախպարը:

Խնդիր չգնելով այստեղ առաջ անդասարկ սոցիալիստա-
կան կոմունիստական հասարակության անդամ լրիվ ու սպա-
ռիչ բնութագրումը, հիշատակենք նոր մարդու հատկանիշներից
հյականները:

ա) Բազմակողմանի զարգացումը: Դա նոր մարդու կարևորագույն հատկանիշներից է՝ ի տարբերություն շահագործական — դասակարգային հասարակություն անդամի: Յեթե շահագործական հասարակության մեջ «Աշխատանքի բաժանման շնորհիվ մարդն ել և բաժանվում, մեկ հատիկ աշխատանքին ընտելանալուն զոհ են բերվում միացած բոլոր ֆիզիկական ու հոգեվոր ընդունակությունները» (Ննգելս — «Անտի Դյուրինգ»), կոմունիստական հասարակության անդամները հնարավորություն կունենան գործադրելու իրենց բազմակողմանիորեն զարգացած ընդունակությունները: Շահագործական հասարակության մեջ աշխատանքի բաժանման ու դրա հետևանքով մարդու բաժանման ամենացայտուն արտահայտությունը, — դա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի բաժանումն է, վոր իր հերթին հետևյալն է արտադրության միջոցների մասնավոր սեփականության, շահագործող ու շահագործվող դասակարգերի առկայության, «...Հոգեվոր և նյութական գործունեությունը, վայելքը և աշխատանքը, արտադրությունը և սպառումը տարբեր անհատների բաժին են դառնում» (Մարքս):

Բանվոր դասակարգի իշխանության հաստատումով արդեն ուժեղ հարված հասցվեց աշխատանքի բաժանման հին ձևին, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև դալություն ունեցող անջրպետին: Սոցիալիստական հասարակության կառուցման հետագա հաջողությունները, գյուղի սոցիալիստական վերակառուցումը, հիմնականում՝ սոցիալիզմի կառուցումը, անդամակարգ սոցիալիստական հասարակության կառուցման ավարտումն ու ատիճանաբար կոմունիզմին անցնելը, ավելի ու ավելի յեն վերացնում մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջի այդ անջրպետը:

✓ Այդ պրոցեսի ամենացայտուն արտահայտությունը մեկ մոտ հանդիսանում և ստախանովյան շարժումը:

Մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջի հակադրությունը լրովին կվերանս կոմունիստական հասարակության մեջ:

Ընկեր Ստալինը ստախանովականների առաջին համամիութենական խորհրդակցությունն արտաստեած իր պատմական ճառում տալիս է վերոհիշյալ հակադրման վերացման ուղիները և ստախանովյան շարժման խոշոր նշանակությունն այդ հակա-

դրություն վերացման գործում. — «Վոմանք կարծում են, թե մտավոր աշխատանքի ու ֆիզիկական աշխատանքի միջի հակադրության վերացմանը կարելի չե հասնել մտավոր և ֆիզիկական աշխատանքի աշխատողների կուլտուր-տեխնիկական վորոշ հավասարեցման ուղիով՝ ինժեներներին ու տեխնիկներին — մտավոր աշխատանքի աշխատողների կուլտուր-տեխնիկական մակարդակը միջին վորակյալ բանվորների մակարդակին իջեցնելու բազայի վրա: Դա միանգամայն սխալ է. կոմունիզմի մասին այդպես մտածել կարող են միայն մանր բուրժուական շահակրատները: Իրպես մտավոր աշխատանքի և ֆիզիկական աշխատանքի միջի հակադրության վերացմանը կարելի չե հասնել միայն բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը ինժեներա-տեխնիկական աշխատանքի աշխատողների մակարդակին բարձրացնելու բազայի վրա... Դա միանգամայն իրականանալի չե խորհրդային կարգերի պայմաններում... Վոչ մի հիմք չկա կասկածելու, վոր միայն բանվոր դասակարգի նման կուլտուր-տեխնիկական վերելքը կարող է քանդել մտավոր աշխատանքի ու ֆիզիկական աշխատանքի միջի հակադրության հիմքերը...»

Ստախանովյան շարժումը նշանակալից և այդ կապակցությամբ այն տեսակետից, վոր նա իր մեջ պարունակում է մեր յերկրի բանվոր դասակարգի հենց նման կուլտուր-տեխնիկական վերելքի առաջին նախահիմքերը, ձիշտ է՝ դեռ թույլ, բայց այնուամենայնիվ նախահիմքերը» (Ստալին — «Լենինի գմի հարցերը», 11 հր. (ուսու), եջ 495—496):

Ստախանովականները՝ դրանք կուլտուրական, տեխնիկական զինված մադիկ են: Մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջի հակադրությունը մեկ մոտ արդեն այնքան է խարխված, վոր «յերբեմն գիտությունն ու տեխնիկայի նոր ուղիներ են հարթում վոչ թե գիտության մեջ հանրածանոթ մարդիկ, այլ գիտական աշխարհում բոլորովին անծանոթ մարդիկ, հասարակ մարդիկ, պրակտիկները, գործի նովատորները» (Ստալին — Բարձրագույն զպրոցի աշխատողների ընդունելության ժամանակ կրեմլում արտաստեած ճառից):

Մեր սոցիալիստական հայրենիքի վորջ կյանքը բազմակողմանի զարգացումն անհրաժեշտություն է դարձնում, քանի վոր մեկ մոտ միանգամայն հասկանալի և սովորական բան է,

յիւրը այսորմա դադդայհի բանվորը վաղն առաջ ե քաշվում
դեկավար տնտեսական, խորհրդային, կուսակցական, պրոֆե-
սիոնալ, կուլտուրական շինարարութեան աշխատանքի, յիւրը
առաւելոտն արտադրութեան մեջ աշխատող բանվորը յերեկոյան
(առանց արտադրութեանից կտրվելու) միջնակարգ, բարձրագույն
գլխաւոր ուսանող ե, յիւրը մեր խորհրդային ինտելիգենցիան
գերազանցապէս բանվորներին, գյուղացիներին ծոցից դուրս յեկած
ինտելիգենցիա յիւ Վոչ միայն քաղաքի արդյունաբերութեան,
այլև գյուղատնտեսութեան բարձր տեխնիկական բաղիսի վրա
վերականգնումը, ավելի ու ավելի մեծ չափով արտադրութեան
մեքենայացումն ու ավտոմատիզացիան արտադրութեան մեջ
աշխատողից պահանջում են վոչ աչնքան ֆիզիկական ուժ ու
ճարպիկութուն, վորքան ընդհանուր ու տեխնիկական բարձր գրա-
գիտութուն, կուլտուրա:

Մեր յերկրում ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթու-
թեան կենսագործունն ել իր հերթին նպաստում ե մտավոր ե
ֆիզիկական աշխատանքի միջի հակադրութեան վերացման,
խորհրդային ամբողջ ժողովուրդն ինտելիգենտ դարձնելու ստա-
լինյան լոգունգի կենսագործման:

Բազմակողմանի զարգացումը, բարձր, իսկական կուլտու-
րականութեանը հնարավոր ե միայն սոցիալիզմի յերկրում:

Բազմակողմանի զարգացման ու բարձր կուլտուրականու-
թեան ամենակարեւոր նախապայմանը՝ դա հիմնովին ու գիտական
մտավոր կրթութեանն ե, գիտութեան տիրապետումն ե, վորի
մասին խոսվեց վերեւում:

Իսկ այդ բոլորը հնարավոր ե միակ գիտական ու ճիշտ
մեթոդաբանութեան, մարքսիստական-լենինյան աշխարհայացքի՝
գիտելիականական մատերիալիզմի հիման վրա:

բ) Աթիզմը: Դա բղխում ե մարքս-լենինյան ուսմունքից,
նրա տեսական, փիլիսոփայական հիմքը կազմող գիտելիական
ու պատմական մատերիալիզմից: Դեպի կրոնն ունեցած մեր
վերաբերմունքի ե մարտնչող աթիզմի վոգով գաստիարակելու
անհրաժեշտութեան մասին ընկեր Ստալինը ամերիկյան առաջին
բանվորական պատվիրակութեան հետ ունեցած գրուցումն ասում
ե. — «Կուսակցութեանը չի կարող չհզոք լինել կրոնի նկատմամբ, ե
նա հակակրոնական պրոպագանդա յի մզում բոլոր ու ամեն

տեսակ կրոնական նախապաշարունների դեմ, վորովհետեւ նա
գիտութեանն ե կողմնակից: Իսկ կրոնական նախապաշարունները
գիտութեան դեմ են գնում, վորովհետեւ յուրաքանչյուր կրոն գի-
տութեանը հակադիր մի բան ե» (Ստալին — «Լենինիզմի հար-
ցերը», էջ 290—291):

Կուսակցութեանը պետք ե պայքար մղի կրոնի ու կրոնա-
կան նախապաշարունների դեմ, վորովհետեւ կրոնն ու նրա ներկա-
յացուցիչները աջակցում են շահագործող դասակարգերին ե քարո-
զում են այդ դասակարգերին հնազանդ լինել:

գ) Պրոլետարական ինտերնացիոնալիզմ ե սոցիալիստական
հայրենասիրութեան: Ինտերնացիոնալիզմը պրոլետարիատի, նրա
գործունեութեան ու պայքարի հիմնական սկզբունքն ե, վորով-
հետեւ միայն ինտերնացիոնալիզմի հիման վրա յի հնարավոր
միջադգային բանվոր դասակարգի կատարյալ ու վերջնական
ազատագրումը:

Խորհրդային Միութեան բանվոր դասակարգն ու աշխատա-
վորութեանն իրենց հաղթանակները մինչեւ հիմա ձեռք են
բերել միջազգային պրոլետարիատի ոժանդակութեամբ: Սոցիա-
լիզմի վերջնական հաղթանակը կարելի յի ապահովել դարձյալ
«միջազգային պրոլետարիատի լուրջ ջանքերը մեր ամբողջ խոր-
հրդային ժողովրդի ել ավելի լուրջ ջանքերին միացնելու
կարգով միայն» (ընկեր Ստալինի պատասխանը Իվանովի նա-
մակին): Մյուս կողմից՝ մեր հաջողութեաններն ու նվաճումները
սոցիալիստական հասարակութեան կառուցման գործում՝ դա վողջ
աշխարհի բանվոր դասակարգի ու աշխատավորութեան հաջողու-
թեաններն ու նվաճումներն են, վորոնք ոժանդակում ե արա-
գացնում են աշխատավոր մարդկութեան ազատագրումը: Խոր-
հրդային Միութեանը բոլոր յերկրների բանվորների հարվածա-
յին բրիգադն ե հանդիսանում: Այս բոլորից հետեւում ե, վոր
«պետք ե ուժեղացնել ե ամբաղնդել ԽՍՀՄ-ի բանվոր դասա-
կարգի ինտերնացիոնալ պրոլետարական կապերը բուրժուական
յերկրների բանվոր դասակարգի հետ» (ընկեր Ստալինի պատաս-
խանը Իվանովի նամակին): Խոսելով հատկապէս յերիտասար-
գութեան ու կոմյերիտիստութեան գաստիարակութեան մասին՝
ընկեր Ստալինն ասում ե. «Ինտերնացիոնալիզմն այն հիմնական
գաղափարն ե, վոր թափանցում ե կոմյերիտիստութեան աշխա-
տանքի մեջ: Դրա մեջ ե նրա ուժը: Դրա մեջ ե նրա հզորութեանը:

Պետք է, վոր ինտերնացիոնալիզմի վոգին միշտ սավառնի կոմ-
յերիամիութեան վրա: Պետք է, վոր մեր յերկրի պրոլետարիատի
պայքարի հաջողութեաններն ու անհաջողութեանները կոմյերի-
տականների գիտակցութեան մեջ շաղկապվին միջազգային
հեղափոխական շարժման հաջողութեանների ու անհաջողու-
թեանների հետ: Պետք է, վոր կոմյերիտականները սովորին
դիտել մեր հեղափոխութեանը վոչ վորպէս ինքնանպատակ, այլ
վորպէս միջոց և հենարան պրոլետարական հեղափոխութեան
հաղթանակի համար բոլոր յերկրներում» (Ստալին—«Կոմյերիտ-
միութեան խնդիրների մասին», Լենին և Ստալին յերիտա-
սարդութեան մասին, էջ 311):

Այս բոլորից հետեւում է, վոր իսկական պրոլետարական
ինտերնացիոնալիզմից բխում է սոցիալիստական հայրե-
նասիրութեանը: Յեթե պրոլետարիատն առաջ՝ բուրժուական
կարգերում հայրենիք չունի, այժմ, կապիտալիզմի լուծը
խորտակելուց հետո, նա ունի իր հայրենիքը, վորը և նա պիտի
պաշտպանի, վորովհետեւ դա միաժամանակ վոզը աշխարհի
բանվոր դասակարգի ու աշխատավորութեան հայրենիքն է: Ընկեր
Ստալինն այս խնդրում էլ անխնա մերկացնում է՝ հակահեղա-
փոխական արոցկիզմը, տրոցկիզմ, վոր իր դավաճանութեանը
սոցիալիստական հայրենիքի դեմ փորձում եր թագցնել ինտեր-
նացիոնալիզմի դիմակի տակ: «Ինտերնացիոնալիստը նա յի, ով
անվերապահորեն, առանց տատանումների, առանց պայմանների
պատրաստ է պաշտանել ի՞նչ՞՞-ը, վորովհետեւ ի՞նչ՞՞-ը հանդիսա-
նում է համաշխարհային հեղափոխութեան բազան, իսկ համաշխար-
հային հեղափոխութեանը պաշտպանել, առաջ շարժել անկարե-
լի յի, առանց ի՞նչ՞՞-ը պաշտպանելու, վորովհետեւ ով մտածում է
համաշխարհային հեղափոխութեանը պաշտպանել անկախ ի՞նչ՞՞-ից
և ի՞նչ՞՞-ին հակառակ, նա դեմ է համաշխարհային հեղափոխու-
թեան, նա անպայման գործում է համաշխարհային հեղափո-
խութեան թշնամիների բանակը» (Сталин—«Международное
положение и оборона СССР», Об оппозиции, էջ 674—675):

դ) Սոցիալիստական վերաբերմունք դեպի աշխատանքն ու
հասարակական գույքը: Պրոլետարիատի դիկտատուրայի, սոցիա-
լիզմի պայմաններում, յերբ արտագրութեան միջոցները զաղա-
րում են մասնավոր սեփականութեան լինելուց, յերբ վերջ է

զրկում շահագործմանը, արմատապես փոխվում է բանվորների
ու աշխատավորութեան վերաբերմունքը դեպի աշխատանքն ու
հանրային սեփականութեանը:

Ամերիկյան առաջին բանվորական պատվիրակութեան հետ
ունեցած իր զրույցում ընկեր Ստալինն ասում է, վոր յի՞թե կապի-
տալիզմի պայմաններում բանվորը գործարանը դիտում է վորպէս
բանտ, ապա խորհրդային կարգերում գործարանը բանվորի հա-
մար վոչ թե բանտ է, այլ վորպէս իր համար մոտիկ ու հարա-
զատ բան, վորի զարգացմամբ ու բարելավմամբ նա կենսականու-
րեն շահագրգռված է. և բանվորների այդ վերաբերմունքը մեր
արդունաբերութեան մեծագույն շարժիչ ուժն է:

Դեպի աշխատանքը յեղած այդ վերաբերմունքի արմատա-
կան բեկման հետեւանքն ու արտահայտութեանն են սոցմըցումն
ու հարվածայնութեանը և դրանց բարձրագույն ձեւը հանդիսա-
ցող ստախանովյան շարժումը: «Միայն կույրերը չեն տեսնում,
վոր մասսաների հոգեբանութեան և դեպի աշխատանքն ունեցած
նրանց վերաբերմունքի մեջ տեղի յի ունեցել հսկայական բե-
կում, վորն արմատապես փոխել է մեր գործարանների ու
փաբրիկաների դեմքը:

«Մըցակցութեան մեջ ամենանշանավորն այն է, վոր նա
աշխատանքի մասին մարդկանց ունեցած հայացքների մեջ
արմատական հեղաշրջում է առաջացնում, վորովհետեւ նա աշխա-
տանքն ամօթաբեր ու ծանր լծից,—վորպիսին նա համարվում եր
առաջներում, դարձնում է պատվի գործ, փառքի գործ, արիւթյան
ու եերասութեան գործ: Կապիտալիստական յերկրներում չկա և
չի կարող լինել նման վոչ մի բան» (Ստալին—Հաշվետու
դեկլուցում կուսակցութեան 16-րդ համագումարում. «Լենինի դմի
հարցերը», էջ 582):

Սակայն մեզ մոտ էլ բոլոր դեպքերում չի, վոր հանդես է
գալիս սոցիալիստական վերաբերմունք դեպի աշխատանքն ու
հասարակական գույքը, յերբեմն հասարակական-պետական գույքը
հափշտակողներն ու քաղցողներն իրենց արժանի պատիժը չեն
ստանում: Պետական հանրային գույքի հափշտակման դեմ պայ-
քարելու համար բավական չեն դատական պատժիչ որդանները:

Անհրաժեշտ է նաև, վոր հանրային գույքը հափշտակողների
չուրջը բարոյական բոյկոտի և հասարակական ատեղութեան

մթնոլորտ ստեղծվի: Այդ անհնար կգարձնի ժողովրդական բարեքնքերի յուրացումը և զոդերի գոյությունը:

ե) Կազմակերպվածություն, կարգապահություն: Դա, ի տարբերություն բուրժուական ու մանր բուրժուական թափթիվածության, անարխիզմի, — պրոլետարիատի, նրա կուսակցության, սոցիալիստական հասարակության անգամի կարևոր հատկանիշներից է. «Առանց կուսակցության մեջ յերկաթի կարգապահություն ունենալու, չեն կարող իրականացվել պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրները շահագործողներին ճնշելու և դասակարգային հասարակությունը սոցիալիստական հասարակության վերակառուցելու վերաբերյալ» (Ստալին — «Զբոսայց ամերիկյան առաջին բանվորական պատվիրակության հետ», «Լենինիզմի հարցերը», հջ 261):

զ) Բուլշևիկյան զգոնություն: Ընկեր Ստալինը միշտ և անդադար աշխատել և աշխատում է մեր կուսակցությունը, բանվոր դասակարգն ու խորհրդային վոյշ ժողովուրդը պահել մոբիլիզացիոն պատրաստականության մեջ, դաստիարակել ու բարձրացնել բուլշևիկյան զգոնությունը, վորովհետև ամենամեծ բանակները կործանվել են այն պատճառով, վոր զոռոզացել են, չափից ավելի ինքնավստահ են դարձել, հաշվի չեն առել թշնամու ուժը, ընկել են թմրածության մեջ, կոքցրել են մարտական պատրաստականությունը և կրիտիկական մոմենտին հանկարծակի յեն յեկել:

Այստեղից էլ կուսակցության կարեվորագույն խնդիրը, նրա ամենորյա աշխատանքի քաղաքական գիծը՝ բարձրացնել բանվոր դասակարգի մարտական պատրաստականությունը ընդդեմ նրա դասակարգային թշնամիների:

Բոլորիս հայտնի յե, թե ինչպիսի սրությամբ է բուլշևիկյան զգոնության բարձրացման անհրաժեշտության խնդիրը դնում ընկեր Ստալինը Համկ(բ)ԿԿ-ի 1937 թ. փետրվարյան մարտյան պլենումում. «Բուլշևիկիների գործը չի՝ հանգչիլ դափնիների վրա և ապշահայել (ротозействовать), Մեզ բարեհոգություն չե պետք, այլ զգոնություն, իսկական բուլշևիկյան հեղափոխական զգոնություն» (Համկ(բ)ԿԿ-ի 1935 թ. հունվարի 18-ի փակ նամակից. Сталин — «О недостатках партийной

работы и мерах ликвидации троцкистских и иных двурушников», հջ 7):

Բուլշևիկյան զգոնության նախապայմանն այն է, վոր մենք հաջողություններից գլխապտույտի չգանք, չգոռոզանանք ու պարծենկոտ չդառնանք, չկորցնենք մեր աշարջությունը: Ընկեր Ստալինը վորպիս տիպար և բոլորիս համար որինակ բերում է ընկեր Լենինին. «Սովորաբար հաղթանակը պտտեցնում է առաջնորդներից վոմանց գլուխները, նրանց դարձնում է զոռոզ և պարծենկոտ: Նման դեպքերում ամենից հաճախ սխտււմ են հաղթանակ տոնել, դափնիների վրա հանգստանալ: Բայց Լենինը մազաչափ անգամ չէր նմանվում այդպիսի առաջնորդներին: Ընդհակառակը, հենց հաղթանակից հետո նա դառնում էր առանձնապես զգոն և աշարջըջ»:

«Հաղթանակով չափրճենալ — այդ՝ Լենինի բնավորության մեջ հենց այն առանձնահատկությունն է, վորը նրան ոգնում էր զգաստորեն կշռելու հակառակորդի ուժերը և կուսակցությունն ապահովագրելու հնարավոր անակնկալներից» (Ստալին — «Լենինի մասին», Հայկուսհրատ, 1938 թ., հջ 26):

5) Զգոնության հետ կապված է բուլշևիկի մի այլ կարեվոր հատկություն — բուլշևիկյան համեստությունը:

Ընկեր Ստալինը ընկեր Լենինի հետ իր առաջին հանդիպման ժամանակ ստացած տպավորության մասին ասում է. «Միայն հետագայում յես հասկացա, վոր Լենինի այդ պարզությունն ու համեստությունը, աննկատելի մնալու կամ, համենայն դեպս, աչքի չընկնելու և իր բարձր դիրքը չշեշտելու այդ ձգտումը, — այդ գիծը Լենինի ամենատեժեղ կողմերից մեկն է, իբրև նոր մասսաների, մարդկության ամենախոր «նեքքնախավերի» պարզ ու սովորական մասսաների նոր առաջնորդի» (Ստալին — «Լենինի մասին», հջ 24):

Հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարում ընկեր Ստալինը դատապարտելով այն կուսակցականներին, վոր զոռոզանում են իրենց կուսակցականությունը և մոտիկ չեն թողնում անկուսակցականներին, յերբեմն բարձր են պահում իրենց քիթն անկուսակցականների առաջ, հիշեցնում է, վոր «վոչ թե զոռոզությունը, այլ համեստությունն է, վոր զարգարում է բուլշևիկիին» (Ստալին — «Լենինիզմի հարցերը», հջ 783):

Կուսակցության 17-րդ համագումարում ընկեր Ստալինը

սպանիչ ծաղրի յե յենթարկում գոռողացած իշխանագուհիներին, վորոնք անցյալում վորոշ ծառայութիւններ են մատուցել և կարծում են, թե իրենք անփոխարինելի յեն և կարող են անպատիժ կերպով խախտել ղեկավար որգանների վորոշումները:

ը) Առանց նվնվալու, առանց վեպտվելու: Բոլշեվիկի մի այլ կարեւոր հատկութիւնը,—դա ղժվարութիւններէջ չլիստելը, չընկճվելն եւ Ընկեր Ստալինը նկարագրում եւ Լենինին մեր կուսակցութեան Ստոկհոլմի համագումարում, վորտեղ բոլշեվիկները մնացին փոքրամասնութեան մեջ, պարտութիւն կրեցին. «Յես այդ ժամանակ Լենինին առաջին անգամ եյի տեսնում պարտվածի դերում: Ես մաղաչափ անգամ նման չեմ այն առօշնորդներին, վորոնք պարտութիւնից հետո նվնվում և վրհատվում են: Ընդհակառակը՝ պարտութիւնը Լենինին դարձրել էր խտացած յեռանդ, վոր իր կողմնակիցներին վողեվորում ե նոր մարտերի, ապագա հաղթանակների համար:

«Չնմովալ պարտութեան առթիւ» —այդ՝ Լենինի գործունեութեան մեջ հենց այն առանձնահատկութիւնն ե, վորը նրան ոգնում եր իր շուրջը մինչեւ վերջ անձնվեր և իր ուժերին հավատացող բանակ համախմբելու» (Ստալին—«Լենինի մասին», եջ 25—26):

Դժվարութիւններէջ վախենալը, հուսալքվելն ու նահանջելը —դա ամեն տեսակ հակակուսակցական, ոպորտունիստական թեքումների կողմնակիցների հատկանիշն ե: Կուսակցութեան 16-րդ համագումարում ընկեր Ստալինը սպանիչ ծաղրի յե յենթարկում աջ ոպողիցիայի լիդերներին այդ վախկոտութիւնը, նորի վախը, նոր հարցերին նոր կերպ մոտենալու նրանց անկարողութիւնը, ֆուտլյարավոր մարդու այն տապնալը, թե «չլինի թե մի բան պատահի»:

«Փուտլյարավոր մարդու այս գծերը նրանցում առանձնապես ծիծաղելի ձեւեր են ընդունում, յերբ ղժվարութիւններ են յերեւման գալիս, հորիզոնի վրա մի ամենափոքր թխպիկ ե յերեւում: Մեղանում վորեւ տեղ ղժվարութիւն, արգելք յերեւման յեկաթ թե չե—նրանք արդեն տազնապի մեջ են՝ չլինի թե մի բան պատահի» (Ստալին—«Լենինի վմի հարցերը», եջ 646): Բայց յեթե ղժվարութիւններն անկայուն մարդկանց մեջ վհատութիւն են առաջացնում, բոլշեվիկներին այդ ղժվարութիւններն

ազելի յեն կոխում և ամրակուռ դարձնում: Դժվարութիւնները նրա համար են, վոր հաղթահարենք, Իսկական հեղափոխականը վոր թե նա յե, ով արիութիւն ե հանդես բերում ապստամբութեան հաղթական շրջանում, այլ նա, ով այդ շրջանում կարողանալով լավ կռվել՝ միաժամանակ կարողանում ե արիութիւն հանդես բերել և հեղափոխութեան նահանջի շրջանում, պրոլետարիատի պարտութեան շրջանում: Մենք չենք կարող և չպետք ե փախչենք ղժվարութիւններից և հեշտ աշխատանք վորոնենք: «Դժվարութիւնները գոյութիւն ունեն հենց նրա համար, վոր մարդիկ կռվեն դրանց դեմ և հաղթահարեն դրանց»: Դիմելով հատկապես կոմյերիամիութեանը, ընկեր Ստալինը նշում ե, վոր «նա պետք ե իր մեջ ուժ գտնի հաղթահարելու համար դեպի նպատակը տանող ճանապարհին յեղած բոլոր և ամեն տեսակ ղժվարութիւնները» (Ստալին—«Կոմյերիամիութեան խնդիրների մասին», Լենին և Ստալին, «Յերիտասարդութեան մասին», եջ 315—316):

Խոսելով մեր յերկրի ինդուստրացման հետ կապված ղժվարութիւնների մասին, ընկեր Ստալինը պահանջում ե ղինվել ամուր նյարդերով, բոլշեվիկյան սովորութեամբ և համառութեամբ՝ հաղթահարելու առաջին անհաջողութիւնները և անշեղորեն առաջ ընթանալու դեպի դրված նպատակը:

Բոլշեվիկյան կամքի ու հաստատակամութեան փայլուն ձեւակերպումը ընկեր Ստալինը տալիս ե Թուրքմենստանի ձիավորներին ուղղած իր վողջույնում (1935 թ. ոգոստոսի 25-ին, «Պրավդա»): «Միայն նպատակի հստակութիւնը, համառութիւնը նպատակին հասնելու գործում և բնավորութեան ամրութիւնը, վորը փշրում ե ամեն ինչ և ամեն տեսակ խոչընդոտներ,—կարողացան ապահովել այդպիսի փայլուն հաղթանակը»:

թ) Ռուսական եղափոխական քափ և ամերիկյան գործիմացաբլուն: «Լենինի գմի հիմունքների մասին» աշխատութեան «Աշխատանքի վոճը» գլխում ընկեր Ստալինը գրում ե, վոր Լենինի գմը, վորպես թերիական ու պրակտիկ դպրոց, դաստիարակում ե աշխատողի հատուկ տիպ, աշխատանքի լենինյան վոճ, վորի առանձնահատկութիւններն են՝

ա) ոռուսական հեղափոխական թափը և բ) ամերիկյան գործիմացութիւնը: «Լենինի գմի վոճը այս յերկու առանձնահատկութիւնների միացումն ե կուսակցական ու պետական աշխատանք

քում: Ռուսական հեղափոխական թափը հակաթույն և ընդդեմ անշարժության, ուստինայի, պահպանողականության, մաքր լճացման, ստրկական վերաբերմունքի դեպի պապենական տրադիցիաները» (Ստալին—«Լենինի գմի հարցերը», էջ 114):

Այդ և, վոր խթանում, առաջ և շարժում միտքը, հեռանկար և տալիս: Բայց գործնականում այդ կարող և այլասերվել և վերածվել դատարկ «հեղափոխական» մանիլովշինայի, յեթև չմիանա ամբերիկյան գործիմացության հետ, վորը հակաթույն և հանդիսանում «հեղափոխական» մանիլովշինայի և ֆանտաստիկ հորինաբանության դեմ: Ամբերիկյան գործիմացությունն իր հաստատակամությամբ, չճանաչելով վոչ մի արգելք, հաղթահարելով ամեն տեսակի խոչընդոտներ, չի կարող վախճանի չհասցնել մեկ անգամ սկսած գործը: Բայց ամբերիկյան գործիմացությունն իր հերթին կարող և այլասերվել և վերածվել նեղմիտ ու անսկզբունք գործածություն, յեթև չիմիտցվի ուստական հեղափոխական թափի հետ:

Անսկզբունք գործածությունը նույնչափ հակառակ և լենինիզմին, վորքան հակառակ և «հեղափոխական» հորինաբանությունը: Առաջինը աշխատողներին զարձնում և հեռանկարից զուրկ քաղքենի, իսկ յերկրորդը՝ շաղակրատ, վորի պատկերը վոչնչացնող ծաղրով տալիս և ընկեր Ստալինը կուսակցության 17-րդ համագումարում արած իր զեկույցման մեջ: «Յես նկատի ունեմ շաղակրատների տիպը: Յես կասեյի ազնիվ շաղակրատների (ծիծաղ), ազնիվ, խորհրդային իշխանությունը նվիրված մարդկանց, վորոնք, սակայն, ընդունակ չեն վորեն բան կազմակերպելու» (Ստալին—«Լենինի գմի հարցերը», էջ 867—868), վորոնք ընդունակ են ամեն մի կենդանի գործ խեղդելու շաղակրատության մեջ—ջրալի անվերջ ճառերի հեղեղի մեջ:

Ժ) Խոսքի և գործի միասնությունը: Յեթև մենշևիկիզմի հատկանիշներից մեկը խոսքի և գործի խզումն և, բոլշևիկի կարևորագույն հատկանիշներից և խոսքի և գործի միասնությունը: Ընկեր Ստալինը բնորոշելով ոպրդիցիոն բլսկը վորպես մենշևիկիկյան թեքում, նշում և, վոր այդ բլոկի խոսքերն ու գործերը, հեղափոխական ֆրազները և ոպորտունիստական գործերը՝ շաբունակ կոնֆլիկտի մեջ են գտնվում: Մինչդեռ բոլշևիկի խոսքը—լուրջ խոսք և: Բոլշևիկները սովոր են կատարել այն խոսք

տունները, վոր տալիս են իրենք» (Ստալին—«Տնտեսական խնդիրների մասին», «Լենինի գմի հարցերը», էջ 649):

Վժա) ձմարտասիրությունը, շիտակությունն ու ազնվությունը հանդիսանում են բանվոր դասակարգի ու նրա կուսակցության, կուսակցական ու անկուսակցական բոլշևիկի անկադուսի հատկությունը, վորովհետև բանվոր դասակարգի ու նրա կուսակցության գործը, կոմունիզմի գործը, աշխարհից ամեն տեսակ շահագործման, անարդարության, չարիքի ու դժբախտության իրական վերացման գործը և դրա համար մղվող պայքարը մարդկության ամենանվիրական, ազնիվ ու վեհ գործն և, վորը թագջընելու, դիմակավորելու ու կեղծելու վոչ մի իմաստ չկա, վոր, ընդհակառակը, բաց ճակատով, հպարտությամբ ու համարձակությամբ պետք և լայնորեն հրապարակել, քարոզել ու պաշտպանել:

Կապիտալիստական շահագործման կողմնակիցները, կապիտալիզմի ագենտները բանվոր դասակարգի մեջ, ամեն տեսակ մենշևիկիները, ժողովրդի անարգ թշնամիներն են շահագրգռված իրենց սեվ գործն ու նպատակները թագջնել բանվոր դասակարգից, դիմակավորվել ու կեղծել:

Բոլշևիկյան կուսակցության ուժն այն և, վոր նա չի վախենում ճմարտությունից և ուղիղ նայում և նրա աչքերին» (Ստալին): Մինչդեռ ժողովրդի ամեն կարգի թշնամիների միջոցը հանդիսանում և յերկրեսանիությունն ու դիմակավորումը, վոչ թե իրենց հայացքների բաց ու ազնիվ պրոպագանդը, այլ դրանց դիմակավորումը, իրենց հակառակորդները հայացքների ստորաքար զովերգումը, իրենց սեփական հայացքները փարիսեցաբար ու կեղծաբար ցելի մեջ կոխկրտել:

Ժբ) Բոլշևիկյան սկզբունքայնությունը բղիում և բոլշևիկյան ճմարտասիրությունից, շիտակությունից, բանվոր դասակարգի ազատագրման գործից ու սկզբունքներից վոչ մի շեղում ու նահանջ չկատարելուց, իր վողջ գործունեությունն ու վարմունքի ղեկավար սկզբունքն այդ գործի համար պայքար մղելը համարելուց, ամեն կարգի կողմնակի, անձնական բնույթի նկատառումներից հրաժարվելուց: Սկզբունքայնության փայլուն ու աննախընթաց որինաչ են հանդիսանում բանվոր դասակարգի մեծ բառացիներ՝ Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը, Ընկեր Ստա

լինը «Լենինի մասին» իր ճառում տալով ընկեր Լենինի բնութագիրը, նշում է, վոր ընկեր Լենինը չէր տատանվում դժալու անգամ կուսակցության մեծամասնության դեմ, յեթե այդ մեծամասնությունը սկզբունքային հիմք չէր ունենում: Այդպիսի դեպքերում ընկեր Լենինը վճռականորեն բռնում էր սկզբունքայինության կողմը՝ բազմիցս կրկնելով, վոր «սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն է»:

Լենինի-Ստալինի մեր կուսակցության անսահման, անսկզուն ու վոչ մի դիջում, համաձայնողականություն չճանաչող պայքարն ամեն տեսակ հակակուսակցական, հակահեղափոխական հոսանքներն ու դրանց կրողների դեմ, ովքեր ել զբաղվել են լինին, ու դրանց բոլորի ջախջախումը, լենինյան-ստալինյան բոլշևիկյան սկզբունքայինության փայլուն դրոշմակ է: Այս նվաճումը նա պարտական է այն հանգամանքին, վոր Թեքուսների դեմ մղած իր պայքարում նա միշտ վարել է սկզբունքային քաղաքականություն՝ յերբեք չիջնելով մինչև անդրկուլիսային կոմբինացիաներն ու դիվանագիտական գեշեփոմախերությունը» (Ստալին—գեկուցում կուսակցության 16-րդ համագումարում, «Լենինիցմի հարցերը», էջ 634):

Հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարում խոսելով առանձին ղեկավարների ներմտություն, քինալընդրություն և դրանց անթույլատրելիության մասին, ընկեր Ստալինը կրկին հիշեցնում է, վոր ղեկավարները, յեթե նրանք ցանկանում են իսկական ղեկավարներ մնալ, պետք է կարողանան մոռանալ վերավորանքները, յեթե այդ պահանջում են պործի շահերը:

Բոլշևիկյան սկզբունքայինության կռիւ խախտում կլինի, յեթե կադրերն ընտրվեն վոչ թե ըստ իրենց գործարար և քաղաքական հատկանիշների, այլ պատահական, սուբյեկտիվ, քաղքենիական հատկանիշներ, իրենց ծանոթների, բարեկամներին, հայրենակիցներին, անհատապես նվիրված մարդկանց և այլն:

Սկզբունքայինության կատարյալ հակապատկերն են ներկայացնում ամեն տեսակ հակակուսակցական ու հակահեղափոխական հոսանքների ու խմբակներն ներկայացուցիչները: Կուսակցության 15-րդ համագումարում ընկեր Ստալինը ծաղրի յենթարկելով ոպուդիցիայի լիդերներին պնդումն իրենց սկզբ

բունքայինության մասին, ասում է. «Պատմությունն ասում է, փաստերն ասում են, վոր դեռ վոչ վորք այնպես հեշտ չի ցատկոսել մի սկզբունքից այլ սկզբունքների, վոչ վորք դեռ այնպես հեշտ ու ազատ չի փոխել իր հայացքները, ինչպես մեր ոպուդիցիայի լիդերները» (ՏԵ. «Ленин и Сталин», т. III, էջ 262):

Իսկ ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ի 1937 թ. փետրվար-մարտյան պլենումում բնութագրելով ժամանակակից տրոցկիզմը, ընկեր Ստալինը նշում է, վոր ժամանակակից տրոցկիզմը բանվոր դասակարգի մեջ քաղաքական հոսանք չէ, այլ ֆրասարանների, դիվերսանտների, հետախույզների, լրտեսների, մարդասպանների անսկզբունք ու զաղափարագուրի բանդա:

Ճգ) Բոլշևիկյան արժանապատվությամբ, պայքար ամեն տեսակ քծնության, ստորաքարշության դեմ—իսկական բոլշևիկի հատկանիշներից է, վոր բղխում է բոլշևիկյան սկզբունքայինությունից, ճշմարտասիրությունից, շիտակությունից: Թիկունքից ֆլասիլ, վստքի տակը փորել, իսկ յերեսից սիրաշահել, քծնել ու շողորթորթելը՝ ժողովրդի թշնամիների «մեթողներից» են: Հին շահագործական, ստի ու կեղծիքի վրա հիմնված հասարակությունից մնացած այս հատկությունները մեզ մոտ մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի այն մնացուկներն են, վորոնք դեռ մինչև վերջը չեն հաղթահարված և յերբեմն բավականին ուժեղ են հանդես գալիս: ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ի 1937 թ. փետրվարյան-մարտյան պլենումում ընկեր Ստալինը դատապարտելով ընտանեկանությունը կադրերի ընտրության գործում, նշում է, վոր նման ընտանեկանությունը ստեղծում է բարենպաստ հող ամեն տեսակ ստորաքարշների աճեցման համար, այնպիսի մարդկանց համար, վորոնք զրկված են իրենց արժանապատվությունից զգացմունքից և վորոնք այդ պատճառով վոչ մի ընդհանուր բան չունեն բոլշևիզմի հետ:

Ճգ) Սոցիալիստական հումանիզմ: Միայն սոցիալիզմի պայմաններում է մարդը զաղաքում մարդու համար գալ լինելուց, միայն այստեղ է վերջ տրվում մարդու շահագործմանը մարդու կողմից: Այստեղ է, վոր մարդկանց փոխհարաբերությունը հիմնվում է վոչ թե փոխադարձ պայքարի, շահի վրա, այլ իսկական մարդկային հարաբերությունների, փոխադարձ հարգանքի վրա: Միայն սոցիալիզմի պայմաններում է, վոր

մարդը դադարում է շահագործման միջոց լինելուց, դառնում է ինքնարժեք: Միայն սոցիալիզմի հայրենիքում կարող են հնչել ու կենսագործվել մեր ժամանակի ամենամեծ հումանիստի վեհ ու բարձր մարդասիրական խոսքերը. «Պետք է, վերջապես, հասկանալ, վոր աշխարհում յեղած բոլոր արժեքավոր կապիտալներից ամենաարժեքավոր և վճռական կապիտալը հանդիսանում են մարդիկ, կադրերը» (Ստալին):

Այստեղից ել բղխում է հոգատար, սրտացավ վերաբերմունքը դեպի մարդիկ, դեպի կադրերը, դեպի «փոքր» ու «մեծ» աշխատողները: «Մարդկանց պետք է հոգատարութեամբ ու ուշադրութեամբ աճեցնել, ինչպես պարտիզպանն է աճեցնում իր սիրած պտղատու ծառը» (Ստալին):

Ինքը՝ ընկեր Ստալինը հենց այն մեծ ու մարդասեր պարտիզպանն է, վոր անհուն հայրական սիրով ու հոգատարութեամբ փայփայում, աճեցնում ու զաստիարակում է հազարավոր ու միլիոնավոր խորհրդային կադրեր, խորհրդային հայրենասերներ:

Մեր յերկրի անվանի մարդիկ բոլորն ել ընկեր Ստալինի հետ ունեցած իրենց հանդիպումներից հիշատակում են նախ և առաջ ընկեր Ստալինի այդ հայրական հոգատարութունը:

Սակայն իսկական, սոցիալիստական հումանիզմը վոչ միայն չի բացասում, այլ անհրաժեշտ է դարձնում անհուն առեւտրութունն ու անխնա պայքարը ժողովրդի ամեն կարգի թըշնամիների դեմ ու նրանց վոչնչացումը:

Ընկեր Ստալինը Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական ոկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1937 թ. դեկտեմբերի 11-ին արտասանած իր ճառում տալիս է ժողովրդի կողմից իր գեպուտատներին առաջադրվող պահանջները և, որինակ բերելով ընկեր Լենինին, տալիս է գեպուտատի, խորհրդային քաղաքացու իրենալական տիպարը: «Ընտրողները, ժողովուրդն իրենց գեպուտատներից պետք է պահանջեն, վորպեսզի նրանք մեան իրենց խնդիրների բարձրութեան վրա, վորպեսզի նրանք իրենց աշխատանքում չիջնեն մինչև քաղաքական որեւիտակների մակարդակը, վորպեսզի նրանք մեան լենինյան տի-

պի քաղաքական գործիչների պոստի վրա, վորպեսզի նրանք լինեն նույնպիսի պարզ ու վորոշակի գործիչներ, ինչպես Լենինը (ծափահարութուններ), վորպեսզի նրանք մարտում լինեն նույնպիսի անվախներ ու անողորներ դեպի ժողովրդի թշնամիները, ինչպիսին Լենինն էր (ծափահարութուններ), վորպեսզի նրանք ազատ լինեն վորեւ խուճապից, խուճապի նման վորեւ բանից, յերբ գործը սկսում է բարդանալ և հորիզոնի վրա ուրեւիտակում է վորեւ վտանգ, վորպեսզի նրանք նույնպես ազատ լինեն խուճապի նման վորեւ բանից, ինչպես ազատ էր Լենինը (ծափահարութուններ), վորպեսզի նրանք բարդ հարցերի լուծման ժամանակ, վորտեղ պետք է բաղմալողմանի կողմնորոշում և բոլոր պլյուսների ու մինուսների բաղմալողմանի հաշվառում, լինեն նույնպես իմաստուն և չաճապարող, ինչպիսին Լենինն էր (ծափահարութուններ), վորպեսզի նրանք լինեն նույնպես ճշմարտացի ու ազնիվ, ինչպիսին Լենինն էր (ծափահարութուններ), վորպեսզի նրանք նույնպես սիրեն իրենց ժողովրդը՝ դին, ինչպես սիրում էր նրան Լենինը (ծափահարութուններ):»

Այս ընտրութեան ամբողջովին վերաբերում է հենց իրեն՝ ընկեր Ստալինին՝ այսօրվա Լենինին:

Սոցիալիստական հայրենիքի քաղաքացու, նոր մարդու՝ վերևում թվարկած այդ հատկանիշների մշակումն ու զարգացումը պիտի դառնա մեր դպրոցի կոմունիստական դաստիարակութեան կոնկրետ բովանդակութունը, այդ դաստիարակութեան վորոշիչ նպատակը: Խորհրդային ամեն մի ուսուցիչ միշտ իր առջև պետք է ունենա խորհրդային քաղաքացու, նոր մարդու այդ իրենալը, ինքը՝ ձգտի մոտենալ այդ իրենալին, ինչպես և աշակերտներից աշխատի կերտել այդ իրենալին մոտեցող մարդիկ՝ նրանց մեջ զարգացնելով ու արմատացնելով նոր մարդու այդ հատկանիշները:

Հնարավոր չհամարելով այստեղ կանգ առնել առհասարակ դպրոցում կոմունիստական դաստիարակութեան մեթոդների ու ուղիների վրա՝ պետք է նշել, սակայն, վոր այդ մեթոդների և ուղիների մեջ վճռական տեղ պիտի բռնեն բանվոր դասակարգի, նրա կուսակցութեան, դրանց մեծ ուսուցիչների, առաջնորդնե-

րի, ղեկավարների պայքարի, գործունեության, կյանքի կեն-
դանի, գրավիչ պատկերներն ու որինակները, մեր սոցիալիս-
տական շինարարության, յերկրի պաշտպանության բնագավա-
ռից վերցված անձնվեր, հերոսական աշխատանքի, խորհրդային
հայրենասիրության, խիզախության, արիության, հերոսության
ամենորոյա հաղարավոր որինակները, պատկերները:

Վ. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Ընկեր Ստալինը զարգացնում է կուլտուրական հեղափո-
խության լենինյան թեորիան: Բուրժուական հասարակության
մեջ իշխող գաղափարները բուրժուական գաղափարներն են, այս-
տեղ բուրժուազիան վոյ միայն նյութական արտադրության մի-
ջոցների մոնոպոլ տերն է, այլև հոգեկան կուլտուրայի, դի-
տուության ու դպրոցի:

Այս պատճառով ել պրոլետարիատը «կապիտալիստական
հասարակության մեջ հանդիսանում է տնտեսապես հարստահար-
վող, քաղաքականապես ճնշված և կռլսուրապես ճգմված» (Կո-
մինտերնի ծրագրից): Կապիտալիստական կարգերում բանվոր
դասակարգի և աշխատավորության զգալի մասը գտնվում է
բուրժուազիայի քաղաքական-գաղափարական ազդեցության
տակ:

Պրոլետարիատի մասսայական կուլտուրական հասունա-
ցումը և նրա հեղափոխական կոմունիստական վերադաստիարա-
կումը հնարավոր է միայն պրոլետարական հեղափոխության
ընթացքում և նրա հետեւանքով:

Յեւնելով մարքսյան այն դրույթից, թե հեղափոխությունը
բանվոր դասակարգի համար «անհրաժեշտ է վոյ միայն այն
պատճառով, վոր վոյ մի այլ յեղանակով հնարավոր չե տապա-
ւել իշխող դասակարգը, այլև այն պատճառով, վոր տապալող
դասակարգը կարող է միայն հեղափոխության մեջ մաքրվել հին
հասարակության գարշանքից և ընդունակ դառնալ նոր հասա-
րակություն ստեղծելու» (Մարքս—Գիւրմանական իդեոլոգիա),
Կոմինտերնի ծրագրում ասվում է. «Բանվոր դասակարգը միայն
անցողիկ շրջանում, միայն նրա կողմից պետական իշխանու-
թյունը նվաճելուց ետո, միայն խորտակելով կրթության բուր-
ժուական մենաշնորհը և տիրապետելով վոյջ գիտությանը,

միայն մեծագույն շինարարական աշխատանքի փորձի հիման
վրա վերափոխում է իր սեփական բնությունը» (Կոմինտերնի
ծրագրի 4-րդ հոդվ. § 7, Պրոլետարիատի դիկտատուրան և կուլ-
տուրական հեղափոխություն):

Ընկեր Լենինը և ընկեր Ստալինը սույն հարցում ևս ջախ-
ջախիչ հարված են տալիս մենշեվիկներին, վորոնք բանվոր
դասակարգի անբավարար կուլտուրական մակարդակն անհաղ-
թահարելի արգելք են համարում իշխանությանն իր ձեռքը
վերցնելու և սոցիալիզմ կառուցելու գործում:

«Լենինիզմի հիմունքների մասին» իր աշխատության մեջ
ընկեր Ստալինը թվարկելով ու մերկացնելով 2-րդ ինտերնա-
ցիոնալի տեսական դոգմաները, այդ դոգմաներից է համարում և
բանվոր դասակարգի կուլտուրականության հարցի մենշեվիկյան
դրվածքը:

«Դոգմա յերկրորդ—պրոլետարիատը չի կարող իր ձեռ-
քում պահել իշխանությունը, յեթե նա առկա չունի բավական
քանակությամբ պատրաստի կուլտուրական և ազմինիստրատու-
րական կադրեր, վորոնք ընդունակ լինելին կարգի դնել յերկրի
կառավարումը. նախ պետք է պատրաստել այդ կադրերը կա-
պիտալիզմի պայմաններում և ապա իշխանությունը վերցնել:
Դիցուք թե, պատասխանում է Լենինը, բայց ինչու չի կարելի
գործն այնպես շուտ տալ, վոր նախ իշխանությունը վերցնենք,
պրոլետարիատի զարգացման համար բարենպաստ պայմաններ
ստեղծենք և ապա—? մղոնանոց քայլերով առաջ շարժվենք՝ աշ-
խատավորական մասսաների կուլտուրական մակարդակը բարձ-
րացնելու, բանվորներից ղեկավարների ու ազմինիստրատորների
մեծաքանակ կադրեր պատրաստելու համար: Միթե ուսաստան-
յան պրակտիկան ցույց չտվեց, վոր բանվորներից ղեկավար-
ների կադրերը պրոլետարական իշխանության որով հարյուր
անգամ ավելի արագ և ավելի հիմնականորեն են աճում, քան
կապիտալի իշխանության որով: Միթե պարզ չե, վոր մասսա-
ների հեղափոխական պայքարի պրակտիկան անողորմաբար ջախ-
ջախում է ոպորտունիստների նաև այս թեորիական դոգմանը»:
(Ստալին—Լենինիզմի հարցերը, Հայկուսերտ, 1937 թ., էջ 22):

Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակին նվիրված
«Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային բնույթը» հոդվա-

ծում ընկեր Ստալինը նշում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխու-
թյան հաղթանակը նշանակում է արմատական բեկում ամբողջ
աշխարհի շահագործվող մասսաների կենցաղի և արագիցիաների,
կուլտուրայի և դադափարախոսության մեջ:

Պրոլետարիատի կողմից իշխանութունը գրավելուց հետո
արմատապես փոխվում է բանվոր դասակարգի ու առհասարակ
աշխատավորների կուլտուրականության հարցի դրվածքը: Այժմ
արդեն այդ կուլտուրականության զարգացման համար անհա-
խճանթաց նախադրյալներ են ստեղծվում, և այդ կուլտուրակա-
նությունը կյանքի ու մահի խնդիր է դառնում: «Մեզ համար
այժմ կուլտուրական հեղափոխությունը բավական է այն բանի
համար, վոր մենք լիովին սոցիալիստական յերկիր դառնանք,
սակայն այս կուլտուրական հեղափոխությունը մեզ համար ունի
անլուր դժվարություններ...» — գրում են ընկեր Լենինը իր հայտ-
նի «Կոոպերացիայի մասին» հոդվածում (Լենին — Յերկերի ժողո-
վածու, 27-րդ հ., էջ 517):

Պետական իշխանությունը նվաճելուց և իր իշխանությունը
հաստատելուց հետո՝ բանվոր դասակարգի իշխանության ամենա-
կարեւոր և դժվարին խնդիրներից է դառնում մասսաների կուլ-
տուրական մակարդակի բարձրացումը, նրանց կոմունիստական
վերադասախարակումը:

Ընկեր Ստալինը «Լենինիզմի հիմունքների մասին» աշխա-
տության մեջ խոսելով պրոլետարիատի դիկտատուրայի 3 գլխա-
վոր խնդիրների մասին, հետեւյալ մեջբերումն է անում ընկեր
Լենինից. «...Պրոլետարիատի դիկտատուրան համար պայքար
է՝ արյունոտ ու անարյուն, բռնի ու խաղաղ, ուղղմական ու տըն-
տեսական, մանկավարժական և ազմինիստոտորական պայքար
հին հասարակության ուժերի ու արագիցիաների դեմ» (Լենին,
25-րդ հ., էջ 191):

Զարգացնելով Լենինի այս դրույթը, ընկեր Ստալինն
ասում է, վոր մի ամբողջ պատմական դարաշրջան հանդիսացող
պրոլետարիատի դիկտատուրան «անհրաժեշտ է վե՛՛ջ միայն նրա
համար, վոր ստեղծվեն սոցիալիզմի լիակատար հաղթության
տնտեսական ու կուլտուրական նախադրյալները, այլ նրա հա-
մար, վոր պրոլետարիատին հնարավորություն տրվի, նախ՝
դաստիարակելու և կոմիւնու իրեն վորպես մի ուժ, վորն ընդու-

նակ է յերկիրը կառավարելու, յերկրորդ՝ վերադասախարակելու
և վերափոխելու մասն ր բուրժուական խավերը՝ սոցիալիստա-
կան արտադրության կազմակերպումն ապահովող ուղղությամբ»
(Ստալին — «Լենինիզմի հարցերը», Հայկուհրատ, 1937 թ., էջ 47):

Պրոլետարիատի դիկտատուրան լինելով մի ամբողջ պատ-
մական դարաշրջան՝ ունի իր զարգացման առանձին ետապները,
յերբ վորպես վճռական ողակ առաջին պլանն է քաշվում պրո-
լետարիատի դիկտատուրայի այս կամ այն հիմնական խնդիրը
և ժամանակավորապես յերկրորդ պլանն են դրվում մյուս խնդիր-
ները: Դա լիովին վերաբերում է և պրոլետարիատի իշխանության
կուլտուր-դաստիարակչական խնդիրներին: «Պրոլետարիատի
դիկտատուրան ունի իր ժամանակաշրջանները, իր հատուկ
ձեւերը, աշխատանքի բազմազան մեթոդները, Բաղաքացիական
պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես աչքի յե դարկում
դիկտատուրայի բռնի կողմը...»

...Սոցիալիզմի շինարարության ժամանակաշրջանում,
ընդհակառակը, առանձնապես աչքի յե դարկում դիկտատուրայի
խաղաղ, կազմակերպչական, կուլտուրական աշխատանքը, հեղա-
փոխական որինականությունը և այլն» (Ստալին — «Լենինիզմի
հարցերի շուրջը», «Լենինիզմի հարցերը», էջ 173):

Այս դրույթն ընկեր Ստալինն ավելի յե զարգացնում մեր
կուսակցության 18-րդ համագումարում աված իր հաշվետու
գեկուցման մեջ՝ սոցիալիստական պետության ու նրա զարգաց-
ման ֆազերի հարցի առնչությամբ: Մեր սոցիալիստական պե-
տության զարգացման առաջին ֆազում (Հոկտեմբերյան հեղա-
փոխությանից մինչև շահագործական դասակարգերի լիկվիդա-
ցիան) պետության յերկու հիմնական ֆունկցիաներն են յին՝ ա)
ստալաված դասակարգերի ճնշումը յերկրի ներսում, բ) յերկրի
պաշտպանությունն արտաքին հարձակումներից: «Այստեղ կար
նաե մի յերրորդ ֆունկցիա՝ այդ մեր պետության որպանների
տնտեսական, կազմակերպչական և կուլտուրական-դաստիարակ-
չական աշխատանքն եր, վորի նպատակն եր զարգացնել նոր,
սոցիալիստական տնտեսության ծիլերը և մարդկանց վերադաս-
տիարակել սոցիալիզմի վողով: Բայց այս նոր ֆունկցիան այդ
ժամանակաշրջանում լուրջ զարգացում չստացավ:

Յերկրորդ ֆազը — այդ քաղաքի և գյուղի կապիտալիստական

տարրերի լիկվիդացիայից մինչև տնտեսութեան սոցիալիստական սխեմայի լիակատար հաղթանակը և նոր Սահմանադրութեան ընդունումն ընկած ժամանակաշրջանն է: Այդ ժամանակաշրջանի հիմնական խնդիրն է՝ կազմակերպել սոցիալիստական տնտեսութեան ամբողջ յերկրում և լիկվիդացիայի յենթարկել կապիտալիստական տարրերի վերջին մնացորդները, կազմակերպել կրկնապատկան հեղափոխութեան, կազմակերպել լիովին ժամանակակից բանակ՝ յերկրի պաշտպանութեան համար: Դրա համեմատ փոխվեցին նաև մեր սոցիալիստական պետութեան ֆունկցիաները... Պահպանվեց և լիովին զարգացավ պետական ուղղանների տնտեսական-կազմակերպչական և կուլտուրական-դաստիարակչական աշխատանքի ֆունկցիան: Յերկրի ներսում մեր պետութեան հիմնական խնդիրն այժմ—տնտեսական-կազմակերպչական և կուլտուրական-դաստիարակչական խաղաղ աշխատանքի մեջ է» (Ստալին—«Հաշվետու զեկուցում կուսակցութեան 18-րդ համագումարում», Պետհրատ, 1939 թ., էջ 66—67):

Բայց անգամ մեր պետութեան զարգացման առաջին ֆազում, անգամ ինտերվենցիայի ու քաղաքացիական պատերազմների շրջանում, մեր յերկրի տնտեսական փլուզման ամենագլխաւորն տարիներին, մեր կուսակցութեանն ու խորհրդային իշխանութեանը, ընկեր Լենինն ու ընկեր Ստալինը հսկայական ուղղորդութեան են նվիրել կուլտուր-դաստիարակչական խնդիրներին, անգամ այդ պայմաններում վիթխարի ու հերոսական աշխատանք և տարվել լիկվիդացիայի յենթարկելու այն անսահման խավարի, անկուլտուրականութեան, սոցիալիստական անզրադիտութեան ժառանգութեանը, վորը մենք ստացել ենք ցարիզմից:

Համկ(բ)հ կհ-ին կից դավկոմների քարտուղարների գասընթացներում կուսակցութեան 13-րդ համագումարի արդյունքների մասին իր զեկուցման մեջ ընկեր Ստալինն ասում է. «Կուսակցութեան հյակն խնդիրներից մեկը պրոլետարիատի տիկտատուրայի դարաշրջանում հանդիսանում է այն, վորպեսզի ծավալենք պրոլետարիատի դիկտատուրայի ու սոցիալիզմի վոզով հին սերունդների վերադաստիարակման և նոր սերունդների դաստիարակման աշխատանքները:

Հին հասարակութեանից ժառանգած ունակութեաններն

ու սովորութեանները, տրադիցիաներն ու նախապաշարումները հանդիսանում են սոցիալիզմի ամենավտանգավոր թշնամին... ուստի և պայքարն այդ տրադիցիաների և ունակութեանների դեմ, մեր աշխատանքի բոլոր վորոտներում դրանց անպայման հաղթահարումը, վերջապես պրոլետարական սոցիալիզմի վոգով նոր սերունդների դաստիարակութեանը հանդիսանում է մեր կուսակցութեան այն հերթական խնդիրները, առանց վորոնց կիրառման անհնար է սոցիալիզմի հաղթանակը» (Ստալին—«Об итогах XIII съезда РКП(б)» էջ 18: Ցիտաւը բերված է ըստ Գ. Կոնստանտինովի—«Роль идей в общественном развитии», «Под знаменем марксизма» №10, 1939 г. էջ 78—79):

Մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման ու կոմունիստական դաստիարակութեան կարեւորագույն նախապայմաններն են հանդիսանում պարտադիր կրթութեանը և անզրադիտութեան վերացումը, վորովհետեւ «անզրադիտ մարդը քաղաքականութեանից դուրս է» (Լենին):

Ընկեր Ստալինը բացառիկ նշանակութեան է տալիս հտակապն ընդհանուր պարտադիր կրթութեան իրականացման խնդրին, վորին նա բազմիցս անդրադառնում է մատնանշելով այդ հարցի վոչ միայն հեղիմաստով կուլտուրական, այլև խոշոր քաղաքական ու տնտեսական նշանակութեանը:

Ընկեր Ստալինը 1925 թ. հունիսի 9-ին Սվերդլովի համալսարանում արտասանած իր ճառում (Ստալին—«Вопросы ленинизма», 3-е изд. էջ 185) կուլտուր-լուսավորական աշխատանքների գծով բանվորների և գյուղացիների զոդման ապահովման համար մոտակա ժամանակաշրջանի խնդիրը համարում է ամբողջ Միութեան մեջ ընդհանուր պարտադիր տարրական կրթութեան անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններ նախապատրաստելը: Պարտադիր տարրական կրթութեան կենսագործումը մեծագույն հաղթանակ կլինի վոչ միայն կուլտուրական, այլև քողաքական ու տնտեսական ճակատներում և հիմք կծառայի յերկրի մեծագույն վերելքի համար: Թեպետ դա կապված է խոշոր զգվարութեանների հետ, վորովհետեւ հսկայական նյութական միջոցներ և մարդկային ուժեր է պահանջում, բայց մենք պետք է այդ ապահովենք մոտակա ժամանակաշրջանում, յեթե մենք իրապես մտածում ենք մեր յերկիրը բարձրացնել կուլտուրականութեան բարձրագույն աստիճանին:

Կուլտուրական հեղափոխութեան լենինյան լոզունգին անդրադառնում ե ընկեր Ստալինը մեր կուսակցութեան 15-րդ համագումարում արած իր հաշվետու զեկուցման մեջ ևս, այդ խնդիրը կապելով բյուրոկրատիզմի դեմ պայքարելու, մեր պետական ապարաւը բարելավելու խնդրի հետ...

Սակայն իրական և ծավալուն կուլտուրական հեղափոխութեան հնարավորութիւնները ստեղծվում են մեր յերկրի սոցիալիստական վերակառուցմամբ, ստալինյան հնգամյակների իրականացմամբ, մեր դուզի սոցիալիստական վերակառուցմամբ, մեր յերկրի կյանքի բոլոր բնագավառներում առաջացած «մեծ բեկման» շրջանում «Սոցիալիզմի վճռական հարձակումը քաղաքի և դուզի կապիտալիստական տարրերի վրա» (Ստալին—«Մեծ բեկման տարին»), անհնար եր առանց կուլտուրական հեղափոխութեան խնդրի լուծման, առանց կադրերի խնդրի լուծման:

Կուլտուրական հեղափոխութեան իրականացման գործում վճռական քայլ հանդիսացող ընդհանուր պարտադիր կրթութեան գործնական ու անհապաղ կենսագործման խնդիրն ե դնում ընկեր Ստալինը մեր կուսակցութեան 16-րդ համագումարում տված իր հաշվետու զեկուցման մեջ.— «Այժմ զլխավորը՝ տարրական պարտադիր ուսուցման անցնելն ե: Յեռասում եմ «գլխավորը», վորովհետեւ մի այսպիսի անցում վճռական քայլ կնշանակեր կուլտուրական հեղափոխութեան գործում: Իսկ վաղուց ժամանակ ե, վոր անցնենք այդ գործին, վորովհետեւ մենք այժմ ունենք ամենաանհրաժեշտը, տարրական, ընդհանուր կրթութեան գործը ԽՍՀՄ-ի շրջանների ճշդող մեծամասնութեան մեջ կազմակերպելու համար: Մինչև այժմ մենք հարկադրված եյինք «խնայողութիւն անել ամեն բանում, մինչև անգամ դպրոցների գործում», վորպեսզի «փրկենք, վերականգնենք ծանր արգիւնաբերութիւնը» (Լենին): ✓

Սակայն վերջին ժամանակներս մենք արդեն վերականգնել ենք ծանր արգիւնաբերութիւնը և այն շարժում ենք առաջ: Հետեւաբար հասել ե ժամանակը, յերբ մենք պետք ե Հեռնաժողովի լինենք տարրական ընդհանուր պարտադիր կրթութեան կազմակերպմանը:

Յեռ կարծում եմ, վոր համագումարը ճիշտ կվարվի, յեթե

հա ընդունի սրա վերաբերյալ վորոշակի ու միանգամայն կատեգորիկ վճիռ» (Ստալին—«Լենինիգմի հարցերը», էջ 568—569):

16-րդ համագումարը ընկեր Ստալինի զեկուցման տոթիվ ընդունած բանաձեւում ասում ե. «Ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման կիրառումը և անդրադիտութեան վերացումը պետք ե դառնա կուսակցութեան մոտակա ժամանակաշրջանի մարտական խնդիրը»:

1930 թ. հուլիսի 25-ի վորոշմամբ ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման մասին՝ մեր կուսակցութեան Ստալինյան Կենտկոմն արդեն գործնական միջոցառումներ և մշակում 1930—31 ուս. տարվանից կենսագործելու ընդհանուր պարտադիր տարրական ուսուցումն ամբողջ Միութեան մեջ, իսկ արգիւնաբերական քաղաքներում, Փարբիկա-գործարանային ուսյոններում և բանվորական ուվաններում պարտադիր ուսուցում մացնելու յոթնամյա դպրոցի ծավալով:

Կուլտուրական շինարարութեան հետագա ծավալման, մեր մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակութեան, խորհրդային դպրոցի հետագա ամրացման ու բոլշեվիկյան վերակառուցման համար, ինչպես և խորհրդային մանկավարժական գիտութեան զարգացման համար բացառիկ նշանակութիւն ունեն ընկեր Ստալինի անմիջական նախաձեռնութեամբ կայացած Համկ(բ)Կ Կենտկոմի և մեր կառավարութեան պատմական վորոշումները դպրոցի մասին:

Շնորհիվ ընկեր Ստալինի, մեր կուսակցութեան ու խորհրդային իշխանութեան հատուկ հոգատարութեան ու ուշադրութեան զեպի դպրոցն ու մատաղ սերնդի դաստիարակութեան գործը, զեպի խորհրդային ուսուցչութիւնը՝ անցած տարիների ընթացքում, ստալինյան հնգամյակների կենսագործման հետեւանքով, մենք ունենք աննախընթաց նվաճումներ նաե կուլտուրական շինարարութեան, մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակութեան ասպարիզում:

Մեր կուսակցութեան 18-րդ համագումարում ընկեր Ստալինը հետեւյալ կերպ ե բնութագրում այդ նվաճումները.— «Ինչ վերաբերում ե ժողովրդի կուլտուրական դրութեանը, ապա նրա վերելքն ընթացել ե ժողովրդի նյութական վերելքի հետքով:

Ժողովրդի կուլտուրական դարգացման տեսակետից հաշվետու ժամանակաշրջանը յեղել է իրոք կուլտուրական հեղափոխության ժամանակաշրջան:

Ընդհանուր պարտադիր տարրական կրթության կենսագործում ԽՍՀՄ ազգությունների լեզուներով, դպրոցների և բոլոր աստիճանների սովորողների թվի աճում, բարձրագույն դպրոցների տված մասնագետների թվի աճում, նոր խորհրդային ինտելիգենցիայի ստեղծում և ամրապնդում—այս և ժողովրդի կուլտուրական վերելքի ընդհանուր պատկերը» (Ստալին—«Հաշվետու զեկուցում կուսակցության 18-րդ համագումարում», էջ 38—39):

Կուսակցության 18-րդ համագումարի վերջում 3-րդ հնգամյակում մենք անցել ենք ամբողջ յերկրում ընդհանուր պարտադիր յոթնամյա միջնակարգ ուսուցման, իսկ քաղաքներում՝ ընդհանուր պարտադիր միջնակարգ (տասնամյա) ուսուցման, զբաղով իսկ ընդհուպ մոտենալով մեր կուսակցության ծրագրի լեզվ կատարմանը (ընդհանուր պարտադիր տասնամյա ուսուցում):

Ահա այն վիթխարի ուղին, վոր համեմատաբար կարճ ժամանակում անցել է մեր յերկրը Յեվրոպայի ամենահետամնաց, անկուլտուրական, խավարի յերկրից,—ցարիզմի իրոք,—դառնալով համատարած գրագիտության, աշխարհիս ամենակուլտուրական յերկրը:

Մեր նվաճումներն այս բնագավառում իրենց արտացոլումն են գտել ու արձանագրվել են Ստալինյան Սահմանադրության մեջ կրթության իրավունքի հայտնի հոդվածում:

VI. ԿԱԳԵՏԱԼԻԶՄԻ ՄՆԱՅՈՒԿՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ
ՄԱՐԴԱԿԱՆՑԻ ԿՈՄՈՒՆԻԶՄ ԿԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԵԶ,—ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԴԱՍՏԻՍՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յերնեղով մարքսյան դրույթից հասարակական կեցության ու հասարակական գիտակցության փոխադարձերության մասին՝ ընկեր Ստալինը ցույց է տալիս, վոր մասնանների կոմունիստական վերադաստիարակումը հնարավոր է միայն պրոլետարական

հեղափոխության միջոցով, պրոլետարական դիկտատուրայի հաստատման շնորհիվ սոցիալիստական, կոմունիստական հասարակարգ կառուցելու, կապիտալիզմի ֆապցուկները մեր եկոնոմիկայից արմատախիլ անելու հիման վրա:

Բանվոր դասակարգի ու նրա ավանգարդ կոմունիստական կուսակցության առանձին յերտերում և ողակներում հանդես յեկած հակապրոլետարական, հակաինչյան, բուրժուական ու մանր պուրժուական հոգեբանության, տրամադրությունների, ազալադուսների, սխալների ու թեքումների սոցիալական աղբյուրը հանդիսացել են բուրժուական, մանր բուրժուական դասակարգերը, խավերը, տարրերը, նրանց ֆապցուկները մեր հասարակական կյանքում ու տնտեսության մեջ: «Թեքումների սոցիալական բազան,—դա մեր յերկրում մանր արտադրության գերակշռության փաստն է, մանր արտադրությունից կապիտալիստական տարրերի զարգացման փաստն է, մեր կուսակցության մանր բուրժուական տարրերով շրջապատված լինելու փաստն է, վերջապես մեր կուսակցության վորոշ ողակներն այդ տարրերով վարակված լինելու փաստն է» (Ստալին—«Յերկրի ինդուստրացման և աջ թեքման մասին ՀամԿ(բ)Կ-ում», «Լենինիզմի հարցերը», 3-րդ հր. (ռուս.), էջ 456):

Մեր կուսակցության 17-րդ համագումարում խոսելով հակաինչյան թեքումների, գաղափարախոսությունների առաջացման պատճառների մասին՝ ընկեր Ստալինն ասում է.—«Կուսակցության պատճառների մասին՝ ընկեր Ստալինն ասում է.—«Կուսակցության մեջ զբոսից հաճախ վատասող լուսնադրություններ են թափանցում: Իսկ այդպիսի տրամադրությունների համար, անտարակույս, հող կա մեր յերկրում, թեկուզ այն պատճառով, վոր մեզանում դեռ մինչև յայժմ ել թե քաղաքում և թե գյուղում գոյություն ունեն բնակչության մի քանի այնպիսի միջակա խավեր, վորոնք այդպիսի տրամադրությունների համար սննդատու միջավայր են հանդիսանում» (Ստալին—«Լենինիզմի հարցերը», էջ 848):

Բանվոր դասակարգի ու գյուղացիության, մեր յերկրի վորջ աշխատավորության վերադաստիարակումը, նրանց գիտակ-

ցության մեջ կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը արդյունք և մեր յերկրի եկոնոմիկայից և հասարակական կյանքից կապիտալիզմի մնացուկների վոչնչացման ու դրա հիման վրա ու դրա հետ թերադրեն կապված՝ մատայների կոմունիստական դաստիարակության, մարքսիզմ-լենինիզմի վոգով նրանց դաստիարակելու:

Հատկապես գյուղացու մանր սեփականատիրական հոգեբանության վերափոխման համար վճռական նշանակություն ունի գյուղի սոցիալիստական վերակառուցումը:

«Ագրարային քաղաքականության հարցերի շուրջը ԽՍՀՄ-ում» իր ճառում խոսելով գյուղի կոլեկտիվացմամբ գյուղի և քաղաքի մեջի «մկրտաի» վոչնչացման մասին՝ ընկեր Ստալինը նշում է, վոր այդ հանգամանքը փոխակերպում է գյուղացու հոգեբանությունը, հին տիպի գյուղացուն փոխարինելու յի դալիս նոր գյուղացին, վորը կոլտնտեսության միջոցով թշվառությունից ընդմիշտ ազատագրվելու և յայն ճանապարհ գուրս գալու նոր հեռանկարներ ունի:

«Կոլտնտեսությունների մեծ նշանակությունն էլ հենց այն է... վոր նրանք հիմնական բազան են գյուղացու վերակերտման համար, նրա հոգեբանությունը պրոլետարական սոցիալիզմի վոգով վերամշակելու համար» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 466):

Նույն հարցի առթիվ ընկեր Ստալինը կուսակցության 17-րդ համագումարում կրկին հիշեցնում է, վոր կոլեկտիվացման հետագա պրոցեսը ներկայացնում է կոլտնտեսությունների կոլմից գյուղացիական անհատական տնտեսությունների մնացորդներն աստիճանաբար ներծծելու և վերադաստիարակելու պրոցես:

Գյուղի սոցիալիստական վերակառուցման առաջին տարիներն արդեն արժատապես փոխում են գյուղացու և գյուղի դեմքը: Այդ նոր, կոլեկտիվացած գյուղի պատկերն է տալիս ընկեր Ստալինը կուսակցության 17-րդ համագումարում իր գեկուցման մեջ. «Ել ավելի փոխվել է գյուղի կերպարանքը: Հին գյուղն իր յեկեղեցով՝ ամենաաչքի ընկնող տեղում, ուրյաղնիկի, տերտերի, կուլակի իր չավագույն տներով՝ առաջին պլանում, գյուղացիների իր կեսավեր խրճիթներով՝ հետին պլանում—սկսում

է չքանալ: Նրա տեղը հանդես է գալիս նոր գյուղն իր հասարակական-տնտեսական շենքերով, իր ակումքներով, ոսպիոններով, կիոններով, դպրոցներով, գրադարաններով ու մուրներով, իր արակտորներով, կոմբայններով, կալիչներով, ավտոմոբիլներով: Զբաղել են կուլակ-շահագործով, արյուն ծծող վաշխառույի, սպեկուլյանտ վաճառականի, հայր-ուրյաղնիկի հին ականավոր դեմքերը: Հիմա ականավոր մարդիկ են կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների, գյուղացիների ու պկումքների գործիչները, ավագ արակտորիտներն ու կոմբայնավարները, դաշտավարության ու կենդանաբուծության բրիգադավարները, կոլտնտեսային դաշտերի՝ չավագույն հարվածայիններն ու հարվածայնուհիները» (Ստալին—«Լենինիզմի հարցերը», էջ 836):

Խորհուրդների արտակարգ 8-րդ համագումարում ընկեր Ստալինը՝ ԽՍՀՄ-ի Սահմանադրության նախագծի մասին իր գեկուցման մեջ տալիս է մեր յերկրի եկոնոմիկայի առարկիզում տեղի ունեցած արժատական փոփոխությունների, դրանց հիման վրա՝ մեր հասարակության դասակարգային կառուցվածքի արժատական վերափոխման ու դրանցով պայմանավորված՝ մեր յերկրի բանվոր դասակարգի, գյուղացիության ու ինտելիգենցիայի վերափոխման հանճարեղ վերլուծությունն ու պատկերը: Այդ վերլուծությունը հանարակական կեցության ու հասարակական գիտակցության փոխհարաբերության մարքսյան տեսության փայլուն կիրառումը, կոնկրետացումն ու դարգացումն է մեր յերկրում, հիմնականում սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում:

Մեր արգյունաբերության ու գյուղատնտեսության, յերկրի վոջ եկոնոմիկայի սոցիալիստական վերակառուցման հետևանքով, շահագործական բոլոր դասակարգերը և դրանով իսկ շահագործումը վերացնելու հետևանքով այլ են դարձել բանվոր դասակարգը, գյուղացիությունը, ինտելիգենցիան:

«...Այդ նշանակում է, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատը փոխարկվել է միանգամայն մի նոր դասակարգի, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի...»

Ինչպես տեսնում էք, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը—դա մի բոլորովին նոր, շահագործումից ազատագրված բանվոր դասակարգ է, վորի նմանը մարդկության պատմությունը դեռ

չի իմացել» (Ստալին—ՆՍՏՄ-ի Սահմանադրութեան նախագծի մասին», հջ 14):

Նույնը և գյուղացիութիւնը. «... հետեւեալը, մեր գյուղացիութիւնը շահագործումից ազատագրված գյուղացիութիւնն է: Այնուհետեւ, մեր խորհրդային գյուղացիութիւնն իր ճնշող մեծամասնութեամբ կողմնակալին գյուղացիութիւնն է, այսինքն նա իր աշխատանքը, իր ստացվածքը հիմնում է վոչ թե մենատնտեսական աշխատանքի ու հետամնաց տեխնիկայի վրայ, այլ կոլեկտիվ աշխատանքի և արդի տեխնիկայի վրայ: Վերջապես մեր գյուղացիութեան տնտեսական հիմքում գտնվում է վոչ թե մասնավոր սեփականութիւնը, այլ կոլեկտիվ աշխատանքի բազայի վրա աճած կոլեկտիվ սեփականութիւնը:

Ինչպես տեսնում եք, խորհրդային գյուղացիութիւնը— դա միանգամայն նոր գյուղացիութիւնն է, վորի նմանը գեղջիկ իմացել մարդկութեան պատմութիւնը» («Ստալին, նույն տեղ, հջ 15—16): Իսկ «մեր խորհրդային ինտելիգենցիան, դա միանգամայն նոր ինտելիգենցիա յի, վորը բոլոր արմատներով կապված է բանվոր դասակարգի և գյուղացիութեան հետ: Փոխվել է նախ ինտելիգենցիայի կազմը... փոխվել է վերջապես ինտելիգենցիայի գործունեութեան նաև բուն իսկ բնույթը: Առաջ նա պետք է ծառայեր հարուստ դասակարգերին, վորովհետև նրա համար այլ յեւք չկար: Այժմ նա պետք է ծառայի ժողովրդին, վորովհետև շահագործող դասակարգերն այլևս չկան: Յեւ հենց այդ պատճառով այժմ նա իրավահավասար անգամ է խորհրդային հասարակութեան, վորտեղ նա բանվորների ու գյուղացիների հետ մեկտեղ, նրանց հետ միասին լծված, կատարում է նոր անդամակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցումը:

Ինչպես տեսնում եք, դա բոլորովին նոր, աշխատավորական ինտելիգենցիա յի, վորի նմանը չենք գտնի յերկրագնդի ոչ մի յերկրում» (Ստալին, նույն տեղ, հջ 16—17):

* *

Սակայն աններելի սխալ կլիներ յենթադրել, թե քանի վոր մեզ մոտ ստեղծված է սոցիալիստական եկոնոմիկա ու սոցիալիստական հասարակութիւն, մեր յերկրի եկոնոմիկայից վերաց-

ված են կապիտալիզմի մնացուկները,— հետեւապես մեզ մոտ բոլոր մարդկանց գիտակցութեան մեջ ամբողջովին հաղթահարված ու վերացված են կապիտալիզմի մնացուկները:

Դժբախտաբար մարդկանց գիտակցութեան մեջից կապիտալիզմի մնացուկները հաղթահարումն այդպես արագ ու հեշտ չի կատարվում, մարդկանց հոգեբանութեան ու հասարակական գիտակցութեան վերափոխումն անմիջապես ու ավտոմատիկ չի հետեւում նրանց հասարակական կեցութեան փոփոխման: Այստեղ հանդես է գալիս պատմական մատերիալիզմի հայտնի դրույթը՝ այն մասին, վոր մարդկանց գիտակցութիւնն իր զարգացմամբ հետ է մնում նրանց հասարակական կեցութեան զարգացումից:

Ընկեր Ստալինը դեռ 1906 թ. գրած իր «Անարխիզմ թե սոցիալիզմ» աշխատութեան մեջ խոսելով մատերիալիստական թեորիայի մասին, մատերիայի բովանդակութեան առաջնութեան մասին՝ հոգեկան կողմի, ձեռքի նկատմամբ, գրում է. — «Պարզ է, վոր նախ փոփոխվում են արտաքին պայմանները, նախ փոփոխվում է մատերիան, իսկ հետո համապատասխանորեն փոփոխվում են գիտակցութիւնը և այլ հոգեկան յերեւոյթները,— ի դեպի կան կողմի զարգացումը յիտ է մնում նյութական պայմանների զարգացումից... Միևնույնը պետք է ասել և հասարակական կյանքի մասին: Այստեղ նույնպես նյութական զարգացումը նախորդում է իդեալական զարգացման, այստեղ նույնպես ձեռք յիտ է մնում իր բովանդակութիւնից» (Л. Берия—«К вопросу об истории большев. организаций в Закавказье», հջ 80):

Մարդկանց գիտակցութեան հետ մնալը նրանց հասարակական կեցութիւնից, սոցիալիստական հասարակութիւնն կառուցող մարդկանց գիտակցութեան մեջ կապիտալիզմի մնացուկների պահպանումը հենարան ու ոժտանդակութիւն է գտնում մեր յերկրի ներսում թշնամական, խորթ տարրերի կողմից, ինչպես և կապիտալիստական շրջապատման կողմից:

Սրա ճշտութիւնը փայլուն կերպով ապացուցում է ընկեր Ստալինը մեր սոցիալիստական շինարարութեան բազմապիսի բնագաղափարներից, հատկապես կոլեկտիվների կյանքից վերցրած որինանհերով:

«Ագրարային քաղաքականության հարցերի շուրջը ԽՍՀՄ-ում» իր ճառի մեջ ընկեր Ստալինն ասում է. «...Ավելի ևս սխալ կլիներ կարծել, թե կոլտնտեսությունների անգամներն արդեն սոցիալիստներ են դարձել: Վնչ, հարկ կլինի դեռևս շատ աշխատելու այն բանի վրա, վորպեսզի վերակերտենք կոլտնտեսական գյուղացուն, շտկենք նրա անհատապաշտական հոգեբանությունը և նրանից սոցիալիստական հասարակության իսկական աշխատավոր պատրաստենք» (Ստալին—«Լենինի զմի հարցերը», հջ 466):

Նույն միտքն է զարգացնում ընկեր Ստալինը Համկ(բ) Կ ԿԿ-ի 1933 թ. հունվարյան պլենումում արած իր զեկուցման մեջ՝ «Առաջին հնգամյակի հանրագումարների» մասին: «Դուք, վորպես մարքսիստներ, պետք է գիտենաք, վոր մարդկանց գիտակցությունն իր զարգացումով յետ է մնում նրանց փաստական զրուծյունից: Կոլտնտեսականներն իրենց զրուծյամբ այլևս մենատնտեսներ չեն, այլ կոլեկտիվիստներ են, բայց նրանց գիտակցությունն առայժմ դեռ հինն է, մասնավոր սեփականատիրականը» (Ստալին—«Լենինի զմի հարցերը», հջ 746):

Կուսակցության 17-րդ համագումարում իր զեկուցման մեջ ընկեր Ստալինը խոսելով եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների հաղթահարման մասին՝ գտնում է, վոր յեթե մենք դեռ չենք կարող խոսել դրանց ամբողջական հաղթահարման մասին մեր յերկրի եկոնոմիկայում, ևս առավել չի կարելի խոսել դրանց հաղթահարման մասին մարդկանց գիտակցության մեջ: Նրա պատճառը վոչ միայն մարդկանց գիտակցության զարգացման յետ մնալն է նրանց անտեսական զրուծյունից, այլև կապիտալիստական շըրջապատումը, վորն աշխատում է աշխուժացնել ու պաշտպանել կապիտալիզմի մնացուկները ԽՍՀՄ-ի եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ:

Ինչպես մեր կյանքի բոլոր բնագավառներում, այնպես էլ սոցիալիզմ կառուցող մարդկանց մեջ հասարակական գիտակցության, հոգեբանության վերափոխումն ու զարգացումը տեղի յե ունենում դիալեկտիկական հակասությունների, հակադիր տեն-

դենցների պայքարի, այդ պայքարի միջոցով հակասությունների հաղթահարման ուղիով: Ինչպես բնության ու հասարակության բոլոր յերեվույթները, այնպես էլ մարդկանց հասարակական գիտակցությունն ու հոգեբանությունն «ունեն իրենց բացատրական և դրական կողմերը, իրենց անցյալն ու ապագան, իրենց մահացողն ու զարգացողը» (Ստալին):

Մեզ մոտ միշտ վորևեք բան մահանում է և մի նոր բան ծնվում, բայց թե հնի մահացումը և թե նորի ծնունդը առանց պայքարի չի լինում. «պայքարը հնի և նորի միջև, մեռնողի և ծնվողի միջև,—ահա մեր զարգացման հիմքը» (Ստալին—«Հալվեալու գեկուցում կուսակցության 15-րդ համագումարում, «Ленин и Сталин», III т., հջ 248):

Մեզ մոտ մարդկանց գիտակցության մեջ հնի և նորի այդ պայքարի անթիվ փառտեր ունենք սոցիալիստական շինարարության բազմադիսի բնագավառներում: Հնի և նորի այդ պայքարը հատկապես սուր է մեր վերակառուցվող գյուղում, մեր կոլխոզներում:

«Ագրարային քաղաքականության հարցերի շուրջը ԽՍՀՄ-ում» իր ճառում՝ ընկեր Ստալինը նշելով կոլխոզների ներքը տեղի ունեցող դասակարգային պայքարն ու այդ պայքարի յուրահատկությունը, ասում է. «...այդ նշանակում է, վոր բանը՝ վերաբերում է այն պայքարին, վորը տեղի յե ունենում կոլտնտեսությունների անգամների միջև, վորտնցից վոմանք դեռևս չեն աղատագրվել անհատապաշտական ու կուլակային մնացուկներից և փորձում են հոգուտ իրենց ոգտագործել կոլտնտեսություններում յեղած վորոշ անհավասարությունը, իսկ մյուսները ցանկանում են կոլտնտեսություններից վտարել այդ մնացուկներն ու այդ անհավասարությունը» (Ստալին—«Լենինի զմի հարցերը», հջ 465—466):

Հասկանալի յե, վոր մեր կուսակցության, խորհրդային իշխանության ու նրա որդանների, բազմաթիվ այլ կազմակերպությունների խնդիրն է՝ հեշտացնել ու արագացնել մարդկանց գիտակցության մեջ նորի հաղթանակն ու հնի հաղթահարումը:

Ընկեր Ստալինը համարյա իր բոլոր աշխատություններում, զեկուցումներում, ճառերում, յեկույթներում, շոշափելով մեծ սոցիալիստական շինարարության ամենատարրեր բնագա-

վառները, միաժամանակ տալիս է մեր կուսակցութեան, բանվոր դասակարգի ու գյուղացիութեան, ինտելիգենցիայի, վողջ աշխատավորութեան կոմունիստական դաստիարակութեան միջոցներն ու մեթոդները: Այդ մեթոդները չափազանց բազմազան են:

Բոլշևիկզմին տիրապետելը բացառիկ և վճռական նշանակություն ունի մասսաների կոմունիստական դաստիարակութեան, մարդկանց գիտակցութեան միջից կապիտալիզմի մնացուկների հաղթահարման համար: Այստեղ է, վոր ամենից ցայտուն կերպով հանդես է գալիս տաշավոր, նոր իդեաների ու թեորիաների «մեծագույն կազմակերպող, մոբիլիզացիայի յենթարկող և փոխակերպող նշանակությունը» (Ստալին):

Բոլշևիկզմին տիրապետելու նշանակությունը բացառիկ է յեղել թե՛ պրոլետարական հեղափոխության նախապատրաստման շրջանում և թե՛ պրոլետարիատի գեկուպտուրա սահմանելու ու սոցիալիզմի կառուցման շրջանում:

✓ Ընկեր Լենինի հետ ընկեր Ստալինի դերը բացառիկ է մեր կուսակցությանը, բանվոր դասակարգին ու աշխատավորութեանը մարքս-լենինյան ուսմունքով, բոլշևիկզմով զինելու գործում, բացառիկ է այն ուշադրությունը, վոր ընկեր Ստալինը նվիրում է այդ հարցին: Ընկեր Ստալինի յուրաքանչյուր զեկուցումը, ճառը, յեկույթը բոլշևիկզմի մի անզուգական զենք է մեր յերկրի և վողջ աշխարհի բանվոր դասակարգի ու աշխատավորության համար:

Վոչ մի հնարավորություն չկա այստեղ քիչ թե՛ շատ լրիվ կերպով տալու ընկեր Ստալինի մտքերը բոլշևիկզմի տիրապետման, դրա վճռական նշանակություն, դրա միջոցների, մեթոդների մասին:

Բավական է հիշատակել ընկեր Ստալինի զեկուցումը Համ. Կ(բ) Կենտկոմի 1937 թ. փետրվարյան-մարտյան պլենումում, Համ. Կ(բ) ԿԿ-ի 1938 թ. նոյեմբերի 14-ի վորոշումը կուսակցական պրոպագանդայի գրվածքի մասին, ընկեր Ստալինի հաշիտու զեկուցումը կուսակցության 18-րդ համագումարում: Հայտնի յե 1937 թ. փետրվարյան-մարտյան պլենումում ընկեր Ստալինի գրույթը՝ տեխնիկային տիրապետելու հին լուզունդը բոլշևիկզմին տիրապետելու լոզունգով լրացնելու մասին՝ կապված մեր յերկրի ներսի և միջազգային նոր իրադրություն-

ների հետ: «Յես կարծում եմ, վոր յեթե մենք կարողանայինք մեր կուսակցական կադրերը, ներքեից վերև, նախապատրաստել գաղափարապես և կոփել քաղաքականապես այն ձևով, վորպեսզի նրանք կարողանային ազատ կերպով կողմնորոշվել ներքին և միջազգային իրադրությունում—յեթե մենք կարողանայինք նրանց դարձնել լիովին հասուն լենինյաններ, մարքսիստներ, վորոնք ընդունակ են առանց լուրջ սխալների լուծել յերկրի զեկավարման հարցերը,—ապա դրանով մենք լուծած կլինեյինք մեր բոլոր խնդիրների իննը տասերորդը» (Ստալին—«Կուսակցական աշխատանքների բացերի ու տրոցկիստական և այլ յերկերեսանիների լիկվիդացիայի միջոցների մասին», եջ 25): Կուսակցության 18-րդ համագումարում ընկեր Ստալինը իր զեկուցման մեջ խոսելով բոլոր բնագավառներում աշխատող մասնագետների կողմից բոլշևիկզմին տիրապետելու անհրաժեշտություն մասին, ասում է. —«Սակայն կա գիտություն մի ճյուղ, վորի իմացումը պետք է պարտադիր լինի գիտության բոլոր ճյուղերի բոլշևիկների համար, այդ մարքսիստական-լենինյան գիտությունն է հասարակության մասին, հասարակության զարգացման որենքների մասին, պրոլետարական հեղափոխության զարգացման որենքների մասին, սոցիալիստական շինարարության զարգացման որենքների մասին, կոմունիզմի հաղթանակի մասին» (Ստալին—«Հաշվետու զեկուցում կուսակցության 18-րդ համագումարում», Պետհրատ, 1939 թ., եջ 55—56):

Մարքսիստական-լենինյան ուսմունքը դոգմա չէ, այլ գործողություն զեկավարություն. սոցիալիստական շինարարությունը ակտիվ մասնակցությունը, դասակարգային պայքարի, սոցիալիստական շինարարության փորձն ու պրակտիկան, այդ պայքարի ու շինարարության բոլշևիկյան կազմակերպումն ու զեկավարությունը հոր միջոց են մասսաների կոմունիստական դաստիարակության համար:

Այս հարցում ևս ընկեր Ստալինը փայլուն կերպով զարգացնում ու կոնկրետացնում է մարքսիստական-լենինյան գրույթը այն մասին, թե՛ մասսաները հեղափոխական պայքարի,

աշխատանքի ու կառուցման պրոցեսում վերափոխում են իրենց սեփական բնությունը, վերադաստիարակվում են:

Մասսաների կոմունիստական դաստիարակության ողակներից են պրոլետարական դեկտատուրայի «շարժափոխերը»: «Դրանք, նախ, բանվորների արհմիություններն են՝ իրենց ճշուղավորումներով կենտրոնում ու տեղերում՝ իբրև մի ամբողջ շարք արտադրական, կուլտուրական, դաստիարակչական ու այլ կազմակերպություններ... Արհմիությունները կարելի չե անվանել մեզ մոտ տիրապետող բանվոր դասակարգին գլխավին ընդգրկող կազմակերպություն: Նրանք կոմունիզմի զարթոց են հանդիսանում:

...Դա յերիտասարդության միաբանումն է... Նրա խնդիրն է ոգնել կուսակցությանը յերիտասարդ սերունդը սոցիալիզմի վոգով դաստիարակելու գործում» (Ստալին—«Լենինի գմի հարցերի շուրջը», «Լենինի գմի հարցերը», հջ 174—175—176):

Պրոլետարիատի դեկտատուրայի այդ փոփոխիցն են խորհուրդները, կոոպերացիան և վերջապես պրոլետարիատի ավանգարդը՝ կուսակցությունը, վորը միացնում—դեկավարում է այդ բոլոր աշխատանքները և այս բնագավառում:

✓ Մասսաների կոմունիստական դաստիարակության կարեվոր միջոցներից մեկը՝ դա մասսաների Լենինյան դեկավարությունն է, վորի եյությունն այն է, վորպեսզի ավանգարդը կարողանա իր հետևից տանել արյերգարդը, վորպեսզի ավանգարդը գնա առաջ, չկորվիլով մասսաներից: «Բայց վորպեսզի ավանգարդը չկարողանա կտրվել մասսաներից, վորպեսզի ավանգարդըն իսկապես կարողանա իր հետևից տանել միլիոնավոր մասսաներին, դրա համար պահանջվում է մի վճռական պայման, այսինքն, վորպեսզի իրենց մասսաներն իրենց սեփական փորձի վրա համագմեն ավանգարդի ցուցմունքների, դիրեկտիվների, լոզունգների նշույթյանը» (Տալին—«Международное положение и оборона СССР». Об оппозиции, հջ 652):

Լենինյան դեկավարությունն այն է, վոր վոչ մասսաների պոչից ընթանանք և վոչ ել մասսաներին համոզելը փոխարինենք բռնությունով, վարչարարությունով ու դեկրետներով:

✓ Մասսաների կոմունիստական դաստիարակման կարե-

✓ վորագույն միջոցը, դա բուլշիվիկյան ինքնաքննադատությունն է, կազմերը սովորեցնել ու դաստիարակել՝ նրանց սեփական սխալների վրա: Մեր սխալների բարեխիղճ բացահայտումը, այդ սխալները ծնող պատճառների ուսումնասիրությունը և այդ սխալներն ուղղելու համար անհրաժեշտ միջոցների նշումը հանդիսանում են կազմերի ճիշտ ուսուցման ու դաստիարակության, բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների ճիշտ ուսուցման և դաստիարակության ամենաճիշտ միջոցներից մեկը:

Այստեղից՝ իր սխալների վոչ թե կոծկումը, այլ իր սխալների ազնիվ և բացահայտ ընդունումը, «վորովհետև միայն այդ ուղիով, միայն բացահայտ և ազնիվ ինքնաքննադատություն պայմաններում կարելի չե դաստիարակել իրապես բուլշիվիկյան կազմեր, կարելի չե դաստիարակել իսկական բուլշիվիկյան լիզերներ» (Ստալին):

✓ Բուլշիվիկյան դաստիարակության մի այլ կարեվոր միջոցը՝ դա վոչ միայն մասսաներին սովորեցնելը, այլ մասսաներից սովաքելն է: Դա նշանակում է, վոր ճիշտ դեկավարման համար դեկավարների փորձն ու գիտելիքները բավական չեն, վոր այդ փորձը պետք է լրացնել կուսակցական մասսաների, բանվոր դասակարգի, ժողովրդի փորձով: Իսկ դա նշանակում է ուշադրություն ունենալը մասսաների ձայնին, վոչ մի բողե շթուլացնել, ևս առավել՝ չկտրել կապերը մասսաների հետ:

✓ Կազմերի բուլշիվիկյան դաստիարակության ու աճեցման չափազանց կարեվոր միջոցներից է և դեպի կազմերը հոգատար վերաբերմամբ ունենալը և կազմերի նիշտ ընտրությունն ու հոգատարությունը:

✓ «Պետք է վերջապես հասկանալ, վոր աշխարհում յեղած կապիտալներից ամենաարժեքավոր և վճռական կապիտալը հանդիսանում են մարդիկ, կազմերը», ուստի և մենք պետք է սովորենք գնահատել մարդկանց, գնահատել կազմերին, գնահատել յուրաքանչյուր աշխատողի, վորն ընդունակ է ոգուտ բերել մեր ընդհանուր գործին:

Աշխատողների ճիշտ ընտրությունն ու նրանց ճիշտ աշխատանքի դնելը ճշանակում է աշխատողներին ընտրել նախքան քաղաքական հատկանշի, այսինքն, արժանի յեն արդյոք

նրանք քաղաքական վստահություն, և յերկրորդ՝ ըստ գործարար հատկանշի, այսինքն պիտանի յեն արդյոք նրանք այսինչ կոնկրետ աշխատանքի համար» (Ստալին—«О недостатках партийной работы и мерах ликвидации троцкистских и иных двурушников», էջ 34):

Դժբախտաբար այդ փորձված կանոնը շատ հաճախ խախտվում է: Ամենից հաճախ աշխատակիցներին ընտրում են վաղ թե ըստ որչեղությամբ հատկանիշների, այլ պատահական, սուբյեկտիվ, որիմատեկական, քաղքենիական հատկանիշներով: Ամենից հաճախ ընտրում են այսպես կոչված ծանոթներին, բարեկամներին, հայրենակիցներին, անձնապես նվիրված մարդկանց, իրենց շեֆերին գովերգելու վարպետներին, անկախ գրանց քաղաքական և գործարար պիտանիություններից:

...Հասկանալի չե, վոր նման ընտանեկան իրադրությունն ստեղծում է բարենպաստ միջավայր պողոտիկներին, այնպիսի մարդկանց աճեցման համար, վորոնք զրկված են իրենց արժանապատվության զգացմունքից և այդ պատճառով վոչ մի ընդհանուր բան չունեն բոլշևիկի հետ» (Ստալին, նույն տեղ, էջ 35):

Կուսակցության 18-րդ համագումարում իր զեկուցման մեջ ընկեր Ստալինը տալիս է կադրերի ընտրության, աճեցման ու դաստիարակման մի փայլուն բոլշևիկյան կողեքս, վոր ուղեցույց պիտի լինի մեզ բոլորիս համար:

«Կադրերը ճիշտ ընտրել, այդ նշանակում է նախ՝ կադրերը գնահատել վորպես կուսակցության և պետության վոսկի ֆոնդը, թանգ գնահատել նրանց, հարգանք տածել դեպի նրանց:

Յերկրորդ՝ ճանաչել կադրերը, ուշադիր կերպով ուսումնասիրել յուրաքանչյուր կադրային աշխատողի արժանիքներն ու թերությունները, գիտենալ, թե ինչ պոստում ամենից հեշտ կարող են ծավալվել աշխատողի ընդունակությունները:

Յերրորդ՝ հոգատար կերպով աճեցնել կադրերը, յուրաքանչյուր աճող աշխատողի ոգնել վեր բարձրանալու, ժամանակ չխնայել այդպիսի աշխատողների հետ համբերատար կերպով «զբաղվելու» համար և արագացնելու նրանց աճումը:

Չորրորդ՝ ժամանակին և համարձակ կերպով առաջ քաշել նոր, յերիտասարդ կադրերին՝ թույլ չտալով, վոր նրանք յերկար մնան հին տեղում, թույլ չտալով, վոր նրանք թթվեն:

Հինգերորդ՝ աշխատողներին ըստ պոստերի դասավորել այնպես, վորպեսզի յուրաքանչյուր աշխատող իրեն իր տեղում զգա, վորպեսզի յուրաքանչյուր աշխատող կարողանա մեր ընդհանուր գործին տալ այն առավելագույնը, ինչ նա ընդհանրապես ընդունակ է տալու իր անձնական հատկություններով, վորպեսզի կադրերի դասավորման աշխատանքի ընդհանուր ուղղությունը լիովին համապատասխանի այն քաղաքական գծի պահանջներին, վորի կենսագործման համար կատարվում է այդ դասավորումը (Ստալին—«Հաշվետու զեկուցում կուսակցության 18-րդ համագումարում», էջ 51—52):

Կադրերի նկատմամբ հոգատար և ուշադիր վերաբերմունքից բղխում է անհատական մոտեցումը դեպի կուսակցության անդամները, դեպի աշխատողներն առհասարակ, նախքան նրանց նկատմամբ ծայրահեղ կուսակցական ու վարչական տուժի կիրառումը՝ ամեն միջոց կիրառել նրանց ուղղելու, դաստիարակելու:

Դատապարտելով կուսակցությունից խմբերով և հաճախ առանց անհրաժեշտ հիմունքի հեռացնելու պրակտիկան՝ ընկեր Ստալինն ասում է. «Իսկ միթե չե՞ր կարելի նախքան կուսակցությունից հեռացնելը՝ նախազգուշացում, յեթե այդ չի ոգնում, ի ցույց դնել կամ հանդիմանություն անել, իսկ յեթե այդ ել չի ներգործում, ժամկետ դնել ուղղվելու համար, կամ, ծայրահեղ դեպքում, փոխադրել թեկնածու, բայց միանգամից (сразу) չհեռացնել կուսակցությունից: Իհարկե կարելի յեր: Բայց դրա համար պահանջվում է ուշադիր վերաբերմունք մարդկանց, կուսակցության անդամների, կուսակցության անդամների ճակատագրի նկատմամբ (Сталин—«О недостатках партийной работы...» էջ 47):

Միանգամայն այլ կերպ պետք է վարվել գոռոզացած իշխանագունների հետ, վորոնք վորոշ ծառայություններ ունենալով անցյալում, կարծում են, թե անփոխարինելի յեն և վոր կուսակցական ու խորհրդային որենքները զրկված են վոչ թե նրա՞նց, այլ հիմարների համար: «Ի՞նչպես վարվել այդպիսի աշխատողների հետ: Նրանց պետք է առանց տատանվելու հեռացնել ղեկավար պոստերից, առանց աչքի առաջ ունենալու նրանց անցյալ ծառայությունները: (Բացականչություններ—«ճիշտ

եմ): Նրանց պետք է աշխատանքից հանել՝ ցածրացնելով պաշտոնը և զրա մասին հրապարակել մամուլում: (Բացականչություններ—«Ֆիշտ և»): Այդ բանն անհրաժեշտ է՝ կոտրելու համար այդ գոռոզացած իշխանագուռ-բյուրոկրատների ամբարձարանությունը և նրանց իրենց տեղը նստեցնելու համար» (Ստալին—«Հաշվետու զեկուցում կուսակցության 17-րդ համագումարում», «Լենինի դմի հարցերը», հջ 367): Մասնանների կոմունիստական դատարակության համադանց կարելու մեթոդներից են սոցմրցումը, հարվածայնությունը, ստախանովյան շարժումը: Իրականում մրցակցությունը սոցիալիզմի կառուցման կալունիստական մեթոդն է աշխատավորների միլիոնավոր մասնանների մաքսիմալ ակտիվության հիման վրա: Իրականում մրցակցությունն այն լծակն է, վորի ոգնությունը բանվոր դասակարգը կոչված է շրջելու յերկրի ամբողջ տնտեսական ու կուլտուրական կյանքը, սոցիալիզմի բազայի վրա:

... Սոցիալիստական մրցակցության սկզբունքն է,—տաշավորների կողմից ընկերական ոգնություն հեա մնացողներին՝ բնդիանուր վերելքի հասնելու համար» (Сталин—«О социалист. соревновании и стахановском движении», հջ 4—5):



Խմբագիր՝ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎՖ 461, Պապկեր 272, տիրաժ 1500

Հանձնված է արտադրության 26 հուլիսի 1940 թ.

Մատրագրված է տպագրության 29 ոկտոբրի 1940 թ.

Մանկ. Ինստիտուտի տպարան, Յերեվան, Մալբուխի փ. 29, 1940 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0228201

ФРББ 2 п. 50 ч.

46.024

Д-р ф. М. САНТРОСИН

**ТОВАРИЩ СТАЛИН И ВОПРОСЫ
КОММУНИСТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ**

Изв. Пол. Института
Ереван, 1949 г.